

# ՔԱՆԱԲԵՆ

Հոգեւոր Աստվածութեան Աստուծոյ ՀԱՄԱՐ  
PANPÈRE REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(ժ. Տարի) ԳԵԿՏԵՄԲԵՐ 1934

(10<sup>me</sup> Année) Décembre 1934

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Ծնունդը տնտեսական տագնապի օրերուն

Գ. Գ. Խ.

Հոգ. կեանք

Զգուածի փորձաքարը

Շաբաթական անձնաքննութիւն

Բայց

Մէկ ըստ միայն երգել կ'ուզեմ

Թարգ. Ն. Մ.

Ա. Օ. Փափազեան

Թարգ. Զ. Բ. Պաւտաբեան

Սամուէլ Պ.

Կենաց ամուսնութիւն

Դուրս պիտի չհանեմ

Փրկութեան խօսքեր

Թարգ. Մ. Կ. Պարամեան

Սերտագուծիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Կենսագրական

Ճան Ուէսլի

Վ. Ս.

Իմանական սիւնակ

Վաճէի նուէրը

Արեւելքի մագերէ

Պատկերներ Բարեկամուհիին

Պետրոս Սարափեան

Պատմանաց

Կեանքի ծովը

Իսկէնտէր Ղազարեան

Յանկ նիւթոց



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերներ թէեւ ֆրանսահայ Աւետարանա-  
կան եկեղեցիներու սրտածոններն է, այսու ամենայնիւ,  
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը  
կը խնդրեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաբախ  
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը  
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բանօրն»  
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յայտնաւորութիւն մը,  
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը  
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերներ երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ  
կը ապուին Մարտէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,  
**Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ**  
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Գարգամանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան  
դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-  
նատու խմբագիրն է՝

#### ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք  
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ  
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխ ի վ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք  
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք  
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ  
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են  
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ /սկ ղրամական առա-  
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անուրով, եր-  
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN  
7, Rue Papère  
MARSEILLE (France)

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille







Ար. Գրոց Միութիւնը կ'պակցութիւն ունի շատ եկեղեցիներու, Ար. Գրոց ուսանողներու, դպրոցներու եւ գոյէճներու հետ, եւ մեծերու. թէ փոքրեւոր արդիւնաւոր աստար մը եղած է Ար. Գրոքը որէ որ կարգաւոր եւ խորհրդածութեան առարկայ ընելու համար:

Ար. Գրոց Միութեան իւր 6,000 ճիւղեր կան Մեծ Բրիտանիոյ մէջ: Եւրոպայի մէջ խոշոր ճիւղեր կան — Յրանաւ, Իտալիա, Տանիմարա, Սքանտինաւիա, Հոլանտա, եւլն: Ասիոյ մէջ — Հնդկաստան, Չինաստան, Ճափոն, Բորէա: Աւստրալիոյ մէջ — Նոր Հաւաւային Ուէլլս, Վիքթորիա, Թասմանիա, Նոր Զելանտա: Ամերիկայի մէջ — Գանատա, Միացեալ Նահանգներ, Պրազիլ, Արճէնթին, եւլն: Աֆրիկէի մէջ — Հիւսիսային, Հարաւային, Արեւելեան, Արեւմտեան եւ Կեդրոնական Աֆրիկէ ու բոլոր Կղզիները:

Ար. Գրոց Միութիւնը կը գործէ անհատներու եւ ազգերու լաւագոյն շահերուն համար: Մեծ ծառայութիւն կը մատուցանէ ապագային՝ նորահաս սերունդին դիւրեկալ միտքերուն վրայ տպաւորելով Ար. Գրոց սկզբունքները, որոնցմէ կարեալ է ճշմարիտ յաջողութիւնը:

Ամէն ոք կրնայ անդամակցիլ Ար. Գրոց Միութեան, բայց անոնք միայն մասնակցելու են որոնք իրապէս կը բարձան կանոնադրապէս ու արօթքով կարդալ որոշուած մասերը:

## ԱՌՐԲ ԳՐՈՑ ԱՌՈՒԹԻՒՆ

Մասնագիւղ

## ԱՆԴԱՄԻ ՔԱՐՏ

ԱՆՆԱԿԱՐԱՆ ԽՆՈՒՆԸ

Ընդունուած

Աստուգրուած

ձեռնիւն  
ՊԱՏՈՒԱԿԱԼ  
ՔԱՐՏՈՒՂԱԸ

«Մանկութենէդ ի վեր Սուրբ Գրքերը զիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Գրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով: Բ Տիմ. Գ. 45:

Քարտուղար Սուրբ Գրոց Միութեան  
J. H. HUBBARD  
3 & 5 WIGMORE ST., LONDON W. 1

1935

## ԱՌՐԲ ԳՐՈՑ ԱՌՈՒԹԻՒՆ

Ար. Գրոց Միութեան, որ 1879ին կազմուեցաւ, նպատակն է գտիլ տալ Ար. Գրքը կանոնադրապէս ամէն որ կարդալու շարժման:

Որեւորուած մեթոտն է Ար. Գրքը ծայրէ ծայր կարդալ հինգ տարուան ընթացքի մը մէջ: Ամէն տարի ամբողջովին կը կարդացուին Աւետարաններուն երկուքը եւ առաքելաւորութեան թուրքերուն երկու երեքը: Որչափ կարելի է, Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի գրքերը փոփոխակի կը կարդացուին, Սաղմոսներն ալ մերթ ընդ մերթ միւս գրքերուն միջեւ: Աւօրեայ ընթերցումները միջին հաշուով տասներկու համար են եւ մասնաւոր կերպով կը յարմարին դեռահասներու եւ գործի մարդոց պէտքերուն:

Ար. Գրոց Միութիւնը Արօթի Միութիւն է միանգամայն: Անգամներն ամէն կիրակի առաւօտ կ'արօթեն իրարու համար:

Ար. Գրոց Միութիւնը տարածուած է ամէն տեղ եւ ունի 850,000 անդամ: Ար. Գրոց տարեկան ընթերցումներուն ցանկը կը հրատարակուի 50 տարբեր լեզուներով:

Այս Միութեան անդամակցելու համար անհրաժեշտ է ձեռն առնել որչեւ տեղային քարտուղարի մը, որ ձեռք կու տայ անդամակցութեան քարտ մը աւօրեայ ընթերցումներու ցանկը պարունակող: Այդ քարտերը կը նորոգուին տարուէ տարի:



Արթնցի՛ր դուն  
որ կը յնամաս, եւ  
կանգնէ մեռելն  
բէն, ու Քրիստոս  
քեզի ըյս պիտի  
տայ:  
Եփես. Ե. 14

Ուրեմն ա՛լ վախմամք, որ չըլլայ թէ  
Անոր հանգիստը մանելու խոստումնքէն որ մեզի մնացեր է,  
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի: ալ առ  
կէ քիչ մը ատենէն  
Ան որ գալու է՝  
պիտի գայ ու պի-  
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Ժ. ՏԱՐԻ

Դեկտեմբեր 1934

Թիի 12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԾՆՈՒՆԴՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ ՕՐԵՐՈՒՆ

Ֆրանսահայ գաղութը այս տարի Ծննդեան տօնը կը դիմաւորէ ճնշիչ պայմաններու տակ: Շատ հայեր արդէն անգործ են երկար ժամանակէ մը ի վեր: Հիմա անոնց բանակը օրէ օր կը ստուարանայ, քանզի գործատէրեր կը ստիպուին դուրս դրկելու իրենց բանւորներէն մէկ մասը եւ ատով գործադրելու պետական այն օրէնքը, որու համաձայն գործարանի մը ամբողջ գործաւորութեան միայն տասը առ հարիւրը պէտք է օտար գործաւորներէ բաղկանայ:

Վերջերս տազնապը աւելի սուր հանգամանք մը առաւ, վաճառի Մարսէյի քաղաքապետութիւնը դադարեցուց այն նպաստը, որմէ ցարդ կ'օգտուէին մօտաւորաբար 2000 հայ գործազուրկներ եւ որով անոնք կը հայթայթէին գոնէ իրենց ամենամանրամեծըտ պիտոյքները: Վախ կայ որ Մարսէյի օրինակին պիտի հետեւին ուրիշ քաղաքներ ալ:

Հիմա արդէն ողբալի է բազմաթիւ հայ ընտանիքներու վիճակը: Եթէ շարունակուին տընտեսական ներկայ պայմանները, շատ աւելի աղետալ պիտի ըլլայ թշուառութեան տեսարանը մի քանի շաբաթներ յետոյ: — Քանի՛ քանի՛ մանուկներ պիտի չհիւծին սնունդի պակասին պատճառաւ եւ քանի՛ քանի՛ գորովայից հայրեր ու մայրեր պիտի չենթարկուին յուսահատութեան, երբ դիտեն իրենց հոգեհատորներու դաւկահար դէմքերը:

Տնտեսական տազնապին ճնշումը տկար չէ նաեւ Ամերիկայի, Սուրբոյ եւ Պալքաններու մէջ ապրող մեր տարաբաղդ հայրենակիցներուն վերայ:

Այդպէս է ներկանս Դժբաղդարար կան շատ նշաններ, որոնք մեզի վախ կը ներշնչեն թէ ա-

ւելի գէշ պիտի ըլլայ ապագան թէ՛ ընդհանուր աշխարհի եւ թէ՛ մանաւանդ մեզի նման անտուն ու անտէր ժողովուրդներու համար:

Ահա այսպիսի հեղձուցիչ պայմաններու տակն է որ մեզի կը մօտենայ Ծնունդը:

Սակայն հակառակ ատոր, այո, ճիշդ ատոր համար եկէք հովիւներուն հետ միասին մինչեւ Բեթլեհեմ երթանք եւ հո՛ր բոլորուինք Յիսուս մանկան շուրջը: Թէեւ աղքատիկ է Անիկա, իբրը ծածկոյթ ունի պատառատուն զգեստներէ շինուած խանձարուր մը, եւ իբր պատուաբարս միայն մտուր մը, — բայց կարող է ազատել մեզ հսկայ Յուսահատութեան շղթաներէն, որոնցմէ կաշկանդուած են մեզմէ շատերը՝ տնտեսական տազնապին պատճառաւ: Անիկա այդ փրկարար գործը պիտի կատարէ մեր մէջ, քանզի իբր մարմնացեալ սէրը Աստուծոյ՝ մեզի պիտի յիշեցունէ անգամ մըն ալ թէ մենք աշխարհի վրայ որը չենք՝ յանձնուած կոյր ու մեզի թշնամի ու ժերու քմահաճոյքին, հապա ունինք Հայր մը, Որ կը փնտռէ Իր զաւակները: Այս տողերը գրելու ատեն միտքս ինկաւ իրական պատմութիւն մը, որ կրնայ բաւական լայն պատկերացնել վերոյիշեալ ճշմարտութիւնը:

Գեղադէմ ու վայելչահասակ աղջիկ մը, — մէկ հատիկ զաւակը իր ծնողաց — կ'ըմբոստանայ իր որբեւարի մօր դէմ, կը բաժնուի անկէ ու հայրենիքէն եւ կը հաստատուի մեծ քաղաքի մը մէջ՝ ազատ ու երջանիկ ապրելու բաղձանքէն մղուած: Անառակ որդւոյն նման՝ հոն անձնատուր կ'ըլլայ ամենէն լալիր ջոփութեանց եւ կը կորսնցնէ իր բոլոր ստացուածքը, — կուսական մաքուր նկարագիրը, գեղեցկութիւնն ու առողջութիւնը, — եւ կը մատնուի յետին թշուառու-



Թեան: Մինչ հոս ու հոն կը քաշքշէր իր հիւանդ-  
կախ ու կէս կուշտ կէս անօթի կեանքը՝ լքուած  
ամենէն եւ յուսահատ, օր մը թերթ մը անցաւ  
իր ձեռքը: Իր ուշադրութիւնը գրաւեց անոր վը-  
րայի մէկ նկարը, որուն ներքեւը գրուած էր,  
«Մայրդ քեզ կը սիրէ, տուն դարձիր»: Աղջիկը  
կրկին ու կրկին կարդաց այս երկու կարճ, բայց  
վսեմ նախադասութիւնները եւ երկար ատեն ակ-  
նապիշ դիտեց լուսանկարը: Սլէքեան չւտ մը յի-  
շատակներ: Յիշեց իր մօր գորովալից սէրը, իր  
ապերախտութիւնն ու անառակութիւնը եւ թըշ-  
ւառութիւնը: Վերջապէս փղձկեցաւ, սկսաւ դառ-  
նապէս լալ եւ ապաշխարութեան արցունք թա-  
փել: Պատկերը լուսանկարն էր աղջկան մօր, որ  
իր անառակ գաւակը գտնելու եւ շահելու յուսով  
գիւմած էր շատ միջոցներու: Բայց ի գո՛ւր: Սա-  
կայն սէրը յուսահատիւ չգիտեր եւ հնարամիտ  
է: Մայրը ուրիշ փորձ մըն ալ ըրաւ: Քանի մը  
կարեւոր լրագիրներու մէջ տպել տուաւ իր լու-  
սանկարն ու վերոյիշեալ խօսքը եւ ատով վեր-  
ջապէս յաջողեցաւ տուն դարձնել իր ըմբոստ  
ու թշուառ աղջիկը:

Ահա նոյնը, բայց ո՛չ, անբաղդատելիօրէն ա-  
ւելին ըրած է Աստուած՝ մեզ համոզելու համար  
թէ մենք, թշուառ մարդիկ, անսէր ու լքուած  
չենք, հապա ունինք Հայր մը, Որ տեղեակ է  
մեր ցաւերուն, Որուն «աղիքը կը գալարի» (Երմ.  
ՆԱ. 20) ի տես մեր թշուառութեան, եւ Որ ըսած  
է, «Միթէ կինը իր կաթընկեր մանուկը կրնա՞յ  
մոռնալ, այնպէս որ իր որովայնին ծննդեանը  
վրայ չզլթալ. թէեւ անոնք մոռնան բայց ես պի-  
տի չմոռնամ: (Եսա. Խթ. 15): Ի նչ սիրազեղ, ի՞նչ  
գորովալից խօսք: Սիրող չի՞ ցնծար զայն կար-  
գալու ատենդ: Սակայն Աստուած միայն խօսքով  
չէ բաւականացած: Մեզ թերահաւատներս հա-  
մոզելու համար՝ իր սիրոյն գործնական շօշափե-  
լի ապացոյցը տուած է՝ զրկելով Բեթլէհեմի Մա-  
նուկը, «Իր էութեան բուն պատկերը» (Եբր. Ա. 2):  
Եւ ի՞նչ է Աստուծոյ էութիւնը: Մէկը, — Որ  
մօտէն ճանչցած է այդ կենդանի Պատկերը, Աս-  
տուծոյ միածին Որդին, Անոր խօսքերը լսած ու  
գործերը տեսած է եւ Անոր չարչարանացը, մահ-  
ուանը ու յարութեանը վկան եղած է, Որդիէն  
գատելով՝ Հօրը էութիւնը բնորոշած է ըսելով՝  
«Աստուած սէր է»: Ապա աւելի պարզելով աւել-  
ցուցած է, «Աս բանին մէջ է սէրը, որ ոչ թէ մենք  
սիրեցինք զԱստուած, հապա որ Անիկա մեզ սի-  
րեց ու Իր Որդին զրկեց մեր մեղքերուն քառու-  
թիւն ըլլալու» (Ա. Յովհ. Դ. 8-10):

Ի տես այս գերբնական ողորմութեան, մենք

ալ իրաւունք չունինք բացազանչելու, «Տեսէք,  
Հայրը ինչպիսի՞ սէր շնորհեց մեզի» (Ա. Յովհ.  
Գ. 1): — Ապստամբ մարդը Իր հետ հաշտեցնելու  
եւ զայն Իր որդին ընելու համար՝ Անիկա աշ-  
խարհ զրկեց Իր կենդանի պատկերը, այո՛, Ինքն  
անձամբ եկաւ յանձին Յիսուսի իբր մարմնաց-  
եալ Սէր: Հիմա ալ յաճախ, մանաւանդ այս նե-  
ղութեան օրերուն, կը մօտենալ մեզի եւ զմեզ  
Իրեն կը հրաւիրէ: Ան գիտէ թէ անտեսական  
տագնապը՝ իբր ծանր բեռ մը՝ կը ճնշէ մեր ուսե-  
րը, ու մենք յոգնած ենք զայն կրելէ. գիտէ թէ  
տասնեակ մը պէսպիսի փուշեր կը խոցոտեն մեր  
սիրտը: Դիտէ թէ մեր հոգին, թէեւ մեղքով ա-  
զարտած, խորքին մէջ դեռ բան մը ունի իր  
պատկերէն, եւ առանց Իրեն ալ աշխարհի մէջ  
որը, անպատասպար, անօթի ու թշուառ է, ինչ-  
պէս վերոյիշեալ աղջիկը եւ ինչպէս Անառակ  
Որդին: Ուստի մեզ Իր պիւրկը կը կանչէ ըսելով,  
«Եկէ՛ք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ,  
եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ» (Մատ. ԺԱ. 28):

Մենք ալ լսենք Իր հրաւերը եւ մասնաւորա-  
բար Ծնունդի օրերուն բոլորուինք Յիսուս Ման-  
կան շուրջը: Դիտենք զԱյն անթարթ, մտախոհ  
ու Սուրբ Հոգւոյն լուսով, ճանչնանք Անոր, Աս-  
տուծոյ էութեան այդ պատկերին մէջ մեր Հօր  
սիրազեղ դէմքը եւ նետուինք Անոր մեզի բաց-  
ուած բազուկներուն մէջ. անոնք կրնան մեզ  
կրել ու հասցնել ապահով նաւահանգիստը՝ որ-  
չափ որ ալ ծովը խռոված ըլլայ անտեսական  
ու քաղաքական փոթորիկներէն:

Անիկա թէ՛ կարող է թէ՛ յօժար այդ ընե-  
լու: Ուստի եթէ Մատանայ մեր խաբեբայ սըր-  
տին մէջ տարակոյսներ արթնցնէ Անոր սիրոյն  
վրայ, լսենք իրեն, «Ան Որ Որդւոյն չխնայեց,  
հապա մեր ամենուն համար մատնեց զանիկա,  
ալ ինչպէ՞ս Անոր հետ ամէն բաները մեզի չը  
պարզեւեր» (Հոով. Ը. 32):

Իսկ, եթէ մեր մէջ թերահաւատութիւն ծագի  
Անոր կարողութեան եւ իմաստութեան մասին,  
բաւական է յիշել միայն երկու գէպքեր, որոնք  
պատահած են Յիսուսի ծնունդի օրերուն, — աշ-  
խարհագիրը եւ Բեթլէհեմի աստղը: Առաջինը  
մեզի կը ցուցնէ թէ մեր Հ. յորը կը ղեկավարէ  
պատմութեան ընթացքը եւ ոչ թէ աշխարհի իշ-  
խանները: Անիկա մղեց հօրը Հոովմի հօր Փ-  
զոստոսը՝ անգիտակցօրէն ու ակամայ իբր գոր-  
ծիք ծառայելու Իր աստուածային նպատակին,  
հրամայելով մարդահամարը՝ կայսրը ստիպեց  
Յովսէփն ու Մարիամը չորս օրուան ճամբորդու-  
թիւն մը ընելու իրենց ամենէն անյարմար



օրերուն, որպէսզի Յիսուսը ոչ թէ Նազարէթի, իրենց հայրենիքին, հապա Բեթլէհէմի մէջ ծնի եւ ասով կատարուի Աստուծոյ կամքը որ յայտնուած էր 700 տարի առաջ (Միք. Ե. 2):

Իսկ երկրորդը մեզի կը յայտնէ թէ բնութիւնն ալ միայն ծառայ մըն է մեր Հօր ձեռքին մէջ եւ կը գործէ սուրբ հրամանին համաձայն: Անիկա 4300 տարի առաջ Իր Սուրբ Մատեանին մէջ զըրել տուած էր, «Յակոբէն աստղ մը պիտի ծագի» (Թուոց ԻԳ. 17): Ուստի Ան կրցաւ այնպէս դասաւորել երկնային մարմիններու շարժումը, որ զարմանալիօրէն կատարուեցաւ Իր այդ խօսքը: Ծիշդ Յիսուսի ծնած օրերուն՝ երկնակամարին վրայ երեցաւ արտակարգ աստղ մը եւ մոզերը առաջնորդեց զէպի Յիսուսի ծնած տեղը:

Այսպէս մեր Հայրը տէրն ու զեկամարն է տիեզերքի բոլոր գործերուն. ամէն բաները Անկէ, Անով ու Անոր համար են: Առանց Անոր թոյլտուութեան մեր գլխուն մէկ մազն իսկ չը պիտի կորսուի: Ուստի չվախնա՛ք բնաւ, մեր Հայրը հաճեր է թաղաւորութիւնը մեզի տալ մեզի շնորհելով իր Որդին: Ան կարող է եւ յօժար, տնտեսական տագնապն ալ գործածել մեր բարձրագոյն շահերուն՝ հոգիներնուս փրկութեան համար: Փա՛ռք եւ երկրպագութիւն իր սուրբ Անուան եւ մեզի համար ծնած Յիսուսի: Գ. Գ. Խ.

ՀՈԴ. ԿԵԱՆՔ

## ԶԳՏՈՒՄԻ ՓՈՐՁԱՔԱՐԸ

Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին կը վազեմ: Փիւ. Գ. 14

Ինչի՞, կամ դէպի ո՞ւր կը ձգտինք: Ահա կեանքի առաջին ու գլխաւոր հարցը: Ամէն անհատ ձգտում մը ունի: Կեանքը երբեք դադար չառնելու Մենք շարունակ շարժման մէջ կը գտնուինք: Դադար առնելու կամ շարժելու ընտրութիւնը մեր ձեռքը չէ: Շարժելու ստիպումն էր: Մենք ձգտուող զաւակներ ենք, սակայն ուղղութեան որոշումը մեր անհատական կամքէն կախեալ է:

Կեանքի մը ձգտումը յայտնի կ'ըլլայ ո՛չ թէ միայն մեծ խնդիրներու՝ այլ նաեւ երեւութապէս փոքրիկ հարկերու մէջ: Զուրին երեսը լողացող յարդը կը հետեւի ջուրին հոսանքին: Աննշան պարագաներու տակ բռնած մեր դիրքէն կարելի է հետեւցնել եւ մակարերել մեր կեանքի ձգտումը: Անհատի մը գլխաւոր տենչը երեւան կու

գայ անոր առած ամէն մէկ քայլին մէջ: Ինչպէս որ շոգեկառքը իր ճամբուն վրայ ձգուած ամէն ինչ կը քշէ, կը տանի իր արագ ընթացքով, նոյնպէս այ մարդ իր խանդավառութեան առաջին ձգտումէն կը տարուի: Ծշմարտապէս նուիրուած կեանքի մը համար նոյնիսկ «ծիւրուն վրայ գտնուած զանգակները՝ Սրբութիւն Տեառն» կը նըկատուին: Պօղոս Առաքեալ իր վրանագործութեան մէջ իսկ կը ցուցադրէր Տէրոջը հանգէպ տաճած իր սաստիկ սէրն ու նուիրումը: Անոր տուած բարեւներն իսկ իր աստուածաշնորհութեան մէկ մասն էր: Կազմէին ու ամենէն սովորական ու ծանօթացուցիչ երեւոյթներն իսկ կը հրավառուէին Աստուծոյ սեղանին կրակովը: Անիկա իր նպատակակէսն ունէր եւ ամէն բանի մէջ ու միջոցով դէպի հոն կը ձգտէր:

Ուրեմն, եթէ Պօղոս առաքեալի ընկերանալ կ'ուզենք, հրամայական պահանջ կուտայ մեզի որ որոշենք մեր ձգտումը: Մեր ձգտումը կ'որոշուի մեր նպատակակէսին ընտրութեամբ: Ըսինք թէ մարդ էակը անդադար շարժման մէջ կը գտնուի: Այդ շարժումը կ'առթուի երկու միջոցով միայն: Մարդ կամ ի՞նք կ'ուղղէ բանի մը ընթացքը եւ կամ թէ անկէ կը մղուի, կը տարուի: Մեր կեանքին ի՞նչ ուղղութիւն տանք: Ի՞նչն ըլլայ մեր նաւահանգիստը: Ի՞նչ ըլլայ մեր նըպատակը: Ի՞նչ էր մեծ առաքեալին ընտրութիւնը: «Նպատակը դիտելով, Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին կը վազեաւ»: Առաքեալը ընտրեց զայն՝ զոր իր բարի Տէրը ընտրած էր իրեն համար: Սրբազան եռանդով ետեւէ եզաւ բռնելու զայն, որու համար ինք բռնուած էր Քրիստոս Յիսուսէն: Տէրը զայն սրբութեան, կատարեալ փրկութեան եւ Աստուծոյ որդեց փառաւոր ազատութեանը կանչած էր: Առաքեալին նպատակը «վերին կոչում» մըն էր: Ինքզինք անգամ մը այդ նպատակին նուիրելով կեանքի բոլոր պարագաներուն տակ երկնային ձգտութեան ուժը կ'զգար: Նպատակը մագնիս մըն է: Եթէ մեր կեանքին նպատակը բարձրացեալ Տէրն է, մեր կեանքը կազմող ամէն ինչ իրեն պիտի քաշէ: Մեր հասարակ խօսակցութիւնը աստուածային յարաբերութեան համը պիտի տայ: Հասարակ գործը աստուածաշնորհութեան կեանքն ու վսեմութիւնը պիտի ներկայացնէ: Նոյնիսկ մեր շատ մը շփոթութեանց մէջէն ապահով քայլերով դէպի լոյսը պիտի յառաջանանք: Ընտրենք մեր նպատակակէտը, «Յիսուսի բարձր կոչումը», եւ մեր կեանքը իր բոլոր արտասովոր ու խառնաշփոթ փորձառութեանց մէջ



մէ՛կ ձգտում, մէ՛կ նպատակ ու վերջնական մէ՛կ  
փառք պիտի ունենայ:

Թարգ. Ն. Մ.

### ՇԱՐԱԹԱԿԱՆ ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ

(ՍԵՐՏԷ, ԱՂԹԻ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԷ)

#### Զ. ԶՐՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Մարկ. ԺԶ. 16: Գործ. Բ. 44: Ը. 12: Թ. 18. ԺԸ.  
8: ԺԹ. 2-5: Մատթ. ԻԸ. 19: Գործ. Ժ. 47, 48: Ը.  
35-38 Մատթ. Գ. 13, 15: Հոով. Զ. 3-4: Կող. Բ. 12:  
Դուն հաւատալով մկրտուա՞մ ես:

Է. Ս. ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ (ԼԵԳՈՆՈՒԹԻՆԸ)  
Մատթ. Գ. 11: Ղուկ. Գ. 16: Մարկ. Ա. 8: Գործ.  
Ա. 5, Ժ. 44: ԺԱ. 15, 16, ԺԹ. 3, 6: Ա. Կոր. ԺԲ. 13:  
Ս. Հոգւոյն մկրտութիւնը գիտե՞ս:

Ը. ՀՈԳԻՈՅՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ ԵՒ ՊԱՐԳԵՒՆԵՐԸ  
Մատթ. Գ. 8: Գաղ. Ե. 22-23: Եփես. Ե. 9: Ա.  
Կոր. ԺԲ. 1-11: Հոով. ԺԲ. 6-8: Ա. Տիմ. Դ. 14: Բ.  
Տիմ. Ա. 6: Ա. Կոր. ԺԴ. 1. Եբր. Բ. 4:

Ս. Հոգւոյն պտուղներովը զարգարո՞ւած ես:  
Ի՞նչ է պարզեւդ:

Թ. Ս. ՀՈԳԻՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ  
Հոով. Ը. 14: Գաղ. Ե. 18. Յով. ԺԴ. 26: Գործ.  
Ը. 26, 39-40: Թ. 10-11: Ժ. 19-20 ԺԱ. 28: ԺԳ. 2-3:  
ԺԶ. 6-7: Ի. 23: ԻԱ. 11: Մատ. Դ. 1: Յովհ. ԺԶ. 13:  
Ս. Հոգւոյն առաջնորդութիւնը գիտե՞ս:

Ժ. ՍՐԲՈՒՓԻՒՆ (ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՄԱՐ զԱՏՈՒԼԻ)  
Երեմ. Ա. 5: Յովհ. ԺԷ. 19: Ա. Կոր. Ա. 30: Ա.  
Թես. Ե. 23: Դ. 3, 7: Եփես. Ե. 26, 27: Եբր. ԺԲ. 14:  
Հո. Զ. 19, 22: Բ. Կոր. Է. 1: Ա. Կոր. Ա. 2: Զ. 11:  
Գ. 16-17: Եբր. Ժ. 10, 14: Ա. Պետ. Ա. 15, 16:  
Սրբացման կեանքը գիտե՞ս:

ԺԱ. ՆՈՒԻՐՈՒՄ  
Ղուկ. ԺԶ. 13: ԺԸ. 22: Հոով. ԺԲ. 1: Զ. 13:  
Բ. Կոր. Ե. 15: Գործ. Ի. 24: Փիլ. Բ. 30: Գործ. ԺԵ.  
25, 26: Հո. ԺԶ. 4: Եբր. ԺԱ. 24-26: Եսթ. Դ. 14-15:  
Հոով. Ա. 16-17: Յայտ. ԺԲ. 11: Հոով. Ը. 35-36:  
Յայտ. Բ. 10:  
Նուիրուա՞մ ես:

Փօնտ Օպէնաս

Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ

### ԲԱՅՑ

#### VII ՄԵՆԲ ԶՄԵԶ

Բոպէ մը մեր վրայ մտածենք: «Ձեզ կանչող  
Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեր բոլոր  
վարմունքներուն մէջ» Ա. Պետ. Ա. 15: Որքա՞ն  
հնազանդած ենք այս հրամանին: Ճշմարիտ է ը-  
սել թէ բոլորս ալ ձախողած ենք. ուստի եթէ  
այսպէս է, միթէ ուրիշները դատել կարենալու  
դիւրքին մէջն ենք: Եթէ Աստուած մեզ, միայն  
զմեզ քննադատելու ըլլար, ոչ այս ոչ ալ գալիք  
կեանքին մէջ յոյս մը պիտի ունենայինք: Բայց  
Նա Իր անսահման, սիրազեղ բարութեամբը կը  
կրէ զմեզ, եւ Իր Որդին զմեզ փրկելու զրկել  
յետոյ, կենդանի է փրկելու եւ օգնելու:

«Շնորհակալ եմ Քեզմէ ով Հայր, որ ուրիշ  
մարդոց պէս չեմ... Աստուած, ողորմէ ինծի մե-  
ղաւորս»: Մեր խորհած քննադատութեանց մեծ  
մասը հպարտութենէ կը ծնի, վասնզի եթէ աւե-  
լի ժամանակ տայինք մեր տկարութիւններն ու  
ձախողանքները յիշելու, այնքան հակամէտ չի  
պիտի ըլլայինք ուրիշներու տկա ութեանց վը-  
րայօք խօսելու: Խոնարհութիւն: Որքա՞ն կը կա-  
րօտինք ասոր մեր առօրեայ կեանքին մէջ: «Մէկ-  
զմէկ իրարմէ լաւ սեպել»ու հրամանին հնազան-  
դիւր զիւրին չէ, բայց եթէ Տէրոջը մտերմօրէն  
մօտ ապրինք, պիտի հասկնանք թէ ամէն բան  
զոր ունինք Իր պարգեւն է եւ ոչ թէ մեր բնա-  
կան ստացուածքը: Յայնժամ ուրիշին սխալները  
տեսնելու պահուն, պիտի յիշենք որ նոյն սխալ-  
ները եւ թերեւս աւելի ծանրակշիռ պակասներ  
պիտի գտնուէին մեր մէջ եթէ Աստուծոյ ձրի  
շնորհքը չունենայինք, եւ առանց որուն շատանց  
մեղաց մէջ կործանած պիտի ըլլար մեր կեան-  
քը: Որքան որ Քրիստոսի մօտենանք, նոյնքան  
ալ պակաս կ'երեւի մեր եսը, մինք ալ նոյն Հա-  
փով կարող կ'ըլլանք Իր կեանքը ապրելու այ-  
լոց յաւիտեանական օգտին համար: Ուստի երբ  
մարմին տկարութիւնը եւ մեր որոշմանց ան-  
հաստատութիւնը սկսին ճնշել ու փորձել զմեզ,  
չդատենք, այլ սիրով մօտենալով պատմենք ձօ-  
րը մասին որ «առատ է ողորմութիւնով» հանդէպ  
տկարին, խօսինք Որդւոյն վրայով որ դառն մա-  
հը ճաշակեց մեղքը սրբելու համար. պատմենք  
Ս. Հոգւոյն մասին, որուն կենարար շունչով շը-  
նորհք կը ստանանք, բարի պատերազմը պատե-  
րազմելով պսակը ժառանգելու:

#### VIII ՈՒՐԻՇՆԵՐԸ

Ոմանք կը կարծեն թէ ուրիշին սխալներուն



վրայէն լուռ անցնիլը համոզման մէջ տկարութիւն կը նշանակէ: Բայց տարբերութիւն մը կայ: Խնչո՞ւ համար չենք կրնար ուղղակի խնդրոյ առաջ կայ անհատին խօսիլ փոխանակ իր վրայ ուրիշի մը խօսելու: Ժամանակներ կան որ մենք պարտինք զգուշացնել տկար բարեկամներ, բայց որքա՞ն աղօթքով ու զգուշութեամբ խօսելու ենք այդ պարագաներուն: Դարձեալ, ժամանակներ կան որ երկու հոգի նոյն բանին կը գիտակցին եւ միասին կրնան աղօթել երրորդ բարեկամի մը դարձին եւ նորոգման համար: Բայց խօսելէ առաջ վստահ ըլլանք թէ մեր իրական դրդապատճառը այս է, եւ զգոյշ ըլլանք որ այն անհատը որ ծանօթ է խնդրոյն, ճշմարիտ բարեկամն է երրորդ անձին որուն վրայով պիտի խօսուի. զի ինչպէս հնդկական առածը կ'ըսէ, «Ժամանակը կ'անցնի, բայց ըսուած խօսք մը կը մնայ»: Երբեք չենք կրնար ետ առնել ինչ որ հեղ մը դուրս ելաւ մեր շրթներէն: Ապա, ոչ մէկ պատճառաւ պարտինք խօսիլ բանի մը վրայ որ վստահութեան կնիքով մեզի յանձնուած է, զի այս նուիրական է:

Երբեմն Աստուծոյ ծառաներու կը հանդիպիմ որոնց հետ միասնաբար չեմ կրնար աշխատիլ, որովհետեւ գործակցութիւնը բացարձակ համաձայնութիւն մը կը պահանջէ շատ մը անհրաժեշտ կէտերու վրայ: Շատեր նոյնպէս կ'զգան, բայց այս պատճառ մը չէ ալ ու ձախ տարաւ ծելու թէ ի՞նչ պատճառաւ չենք կրնար միաբանիլ, կամ յօգուածներ զրել քրիստոնեայ թերթերու, դրդապատճառներ վերադրելով ու մեղմէ տարբերողներուն վրայ անձնապէս յարձակելով: Քրիստոս յարձակեցաւ սխալին ու մեղքին վրայ սակայն երբեք անախորժ ու բիրտ խօսքեր չըրաւ սխալած անհատին կամ մեղաւորին վրայ:

Կարելի է այս կամ այն խնդրոյ մասին անհամաձայն ըլլալ: Պարտինք Աստուծոյ վրայ մեր անհատական հաւատքը պահել, քանզի չենք կրնար մեր կեանքը վտանգել կամ Աստուծոյ մեզի պարգեւած լոյսին անարժան կեանք մը ապրիլ: Բայց կրնանք զանազանութիւն առանց շարունակաբար արտաքին աշխարհին գիտցնելու Քրիստոսի եկեղեցիին բաժանումներն ու կոիւնները, առանց յայտնելու մեզմէ շատերուն սիրոյ պակասը, որոնց վրայ սակայն Տէրոջը անունը կանչուած է: Անհամաձայնութեան բոլոր խնդիրներուն մէջ, ուր կ'զգանք թէ մէկը կը սխալի, մեր առաջին պարտականութիւնն է աղօթել այդ մէկին համար: Ուրիշին օգտին համար մատուցուած զաղտնի աղօթքը որքա՞ն աւելի օգ-

տակար է քան հրապարակաւ եղած այն կարգ մը քննադատութիւնները, որք ոչ մէկուն օգտակար են. ալ չխօսինք խնդրոյ առարկայ եղող անձին վրայ, որ Աստուծոյ օգնութեան կը կարօտի:

#### IX ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵԼԻ Է

Եւ ի՞նչ պիտի ըլլար աշխարհի շահը եթէ բոլորս ալ քրիստոնեայ համայնքներու մէջ դադարէինք քննադատելէ եւ իրարու հետ իրական խաղաղութեամբ եւ համաձայնութեամբ ապրէինք: Սա երկու բաներուն վստահ եմ: Այնքան մեծ ուրախութիւն մը ի յայտ պիտի գար որ մէն մարդ իր կարելին պիտի ընէր որ նախնի կասկածանքի ու անպէտ խօսակցութիւնները դարձեալ երեւան չգային: Աշխարհէն շատեր վերջապէս պիտի տեսնէին այդ կերպով ի յայտ եկած Քրիստոսի պատկերը ու Իրեն պիտի գային, որովհետեւ վերջապէս պիտի համոզուէին թէ ինչ որ կարդացած կամ լսած էին այս մասին, կ'իրականանար: Այս անգոյշ քննադատութիւնը կը վշտացնէ Սուրբ Հոգին, եւ հոս կը գտնենք եռանդուն քրիստոնէական գործունէութեանց անպտուղ մնալուն մէկ պատճառը:

Ափրիկէի մէջ խումբ մը մարդիկ եւ կիներ կ'ապրին որք կը հաւատան ներդաշնակ կեանքի մը կարելիութեան: Թէպէտեւ այս իրողութիւնը գործնականապէս փաստել ուզող ոեւէ խմբակ ապահովաբար կը հանդիպի հակառակութեան, տակաւին Աստուած գայս իրենց մէջ իրականացուցած է: Երբ սկիզբէն Անգլիկայէն մեկնեցան զանազան ասպարէզներ թողելով պարագելու համար Աստուծոյ իրենց յանձնած գործին, որ տղայք եւ աղջիկներ Քրիստոսի շահելուն մէջ կը կայանար, մէկը, անցեալի փորձառութենէն դատելով ըսած է, «Վեց ամսուան մէջ իրարու հետ կատուներու պէս պիտի կռուրտին»:

Այդ վեց ամիսը շատոնց անցած է բայց Տէրոջը գորութիւնն ու համբերութիւնը դեռ չէ սպառած: Ոչ ալ այդ, աշխարհի մէջ միակ տեղն է, զի ուրիշ երկիրներու մէջ ալ Աստուծոյ ծառաներ վկայ են Աստուծոյ անվախճան գորութեան որ կարող է սիրով միացնելու զանազան խառնուածքով անհատներ: Դիւրաւ շահուելիք մըրցանակ մը չէ այս, ու չենք կրնար առանց աղօթքի ու ջանքի, առանձին կամ խմբովին մտնել Քրիստոսով եղած այս ընկերակցութեան ուրախութեան մէջ: Անկեղծութիւն մը պէտք է զոր յաճախ կը պակսի քրիստոնեաներուն մէջ, պարտինք իրարու յաղթութեանց եւ պարտու-



թեանց մէջ ալ բաժնեկից ըլլալ: Որոշելու ենք զգուշանալու Տէրոջը առջեւ մեր եղածէն տարբեր եւ լաւագոյն քրիստոնեաներ երեւնալու յաջոյն: Տէրը այս ամէնը գիտէ եւ տակաւին կը սիրէ զմեզ:

Անոնց՝ որք այս ազատութիւնն ու Տէրոջմով եղած ընկերակցութիւնը փորձառարար վախճած են, անոնց համար կեանքը ուրախալից եւ նուիրական է, Քրիստոսի սիրով ի մի ձուլուած այսպիսի խումբով մը Տէրը ինչե՛ր չէր կրնար ընել զանոնք շրջապատող կարօտեալներուն համար: Բիշըրտ Բօլլ որ ասանք խորունկ փորեց Աստուծոյ ծածուկ զանձը գտնելու համար, կը գրէ, «Ճշմարիտ սէրը՝ տարածող, հիւսող եւ դարձնող զօրութիւն մ'ունի: Տարածող, զի իր բարութեան ճառագայթները ոչ միայն կը ղրկէ բարեկամներու եւ դրացիներու այլ նաեւ օտարներու եւ թշնամիներու: Ապա հիւսելով, ինչու որ իր սիրողները կը միացնէ գործի եւ կամքի մէջ, ան կը միացնէ Քրիստոսը ամէն սուրբ սրտի հետ: Ան որ ճշմարտապէս Աստուծոյ կը մօտենայ՝ մէկ հոգի եւ մէկ կամք է, ոչ ընոյթով, այլ շնորհքի մէջ: Վերջապէս սէրը դարձնող, փոխող ոյժ մը ունի, որովհետեւ սիրողը սիրուածին կը փոխէ ու կը պատուաստէ զայն: Ահա թէ ինչու սիրաւ որ իրապէս կ'ընդունի Ս. Հոգւոյն կրակը, բոլորովին կ'այլի եւ կարծես կրակի կը փոխուի առաջնորդուելով Աստուծոյ նմանութեան»: Նոյն խորհուրդը կը տեսնենք հնդկերէն առածի մը մէջ, «Կրակը տեսնողը անոր գոյնը կ'առնէ»:

Սիրողները կը միացնէ գործքով եւ մտքով: Քրիստոսը եւ ամէն սուրբ ախրտը կը միացնէ՝ Աստուծոյ զմեզ իր սիրոյն, Որդւոյն այս մտերմութեան կը կանչէ որուն առջեւ լեցուն ուրախութիւն կայ թէ հոս երկրի վրայ ինչպէս նաեւ յետոյ երկինքի մէջ: Ո՛հ թէ իւրաքանչիւր ընթերցողի աղօթքը, ամէն գնով, Տէրոջը հետ առօրեայ մտերմութեան մը աճումին համար ըլլալ: Եւ Աստուծոյ որ մեր սրտերուն անկեղծութիւնը գիտէ, մեզ երկար չպիտի թողու առանց երաշխիքներ տալու այն լոյսի եւ սիրոյ առատանալուն, որք միշտ պատրաստ են հնազանդութեան շաւիղներուն վրայ:

#### X ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՄԱՆ ՄԸՆ Է

Տեսանք թէ միութիւնն ու քննադատ հոգիէն զերծ մնալը կարելի է: Աստուծոյ զայն ազդու ծառայութեան անհրաժեշտ տարրերէն մին կը նշուի: Թերեւս մեզի, օտար երկիրներու մէջ միախառնութեան կանչուածներուն համար աւել-

ի դժուար ըլլայ, վասնզի յաճախ կ'ընտան կ'ազդէ ջիղերուն վրայ, աւելցնելով դիւրագրգռութիւնն ու դժուարացնելով իրարու հետ համաձայնապիլը: Բիշ չէ անոնց թիւը որք երբ միախառնական դաշտը կը հասնին, զարմանքի կը մատնուին, միախառնարներու միջեւ, իրարու վրայ եղած խօսքերը լսելով: («Պարագան նոյնն է նաեւ ուրիշ հոգեւորներու համար, իմք») Վտանգը եւ հակումը այս թշուառութեան սրածայր բերանը կորսնցնելուն մէջ կը կայանայ: Երանի՜ թէ Աստուծոյ զմեզ արթնցնէր այս հոգեւոր թմրութեան: Իր զօրութիւնը անսահման է ուստի զայս մեր կեանքերէն վերցնելու կարելիութիւնը կախում ունենալու է մեր խառնուածքէն, պարագաներէն եւ շրջանակէն:

Նոր պատուիրան մը կուտամ ձեզի՝ որ մէկ-զմէկ սիրէք, ինչպէս Ես ձեզ սիրեցի որ դուք ալ մէկ-զմէկ սիրէք: Ասով ամէնը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք, եթէ իրարու վրայ ոչ ունենաք» (Յովհ. Ժ. 34-35): Եւ ինչպէ՞ս պիտի կարենան գիտնալ՝ մեր արդի ընդհանուր ապրելակերպին նայելով: Աստուծոյ ներքին ձայնի որ այսպէս գիտակցաբար աշխարհի աչքերը կը կուրցնենք, անոնցմէ ծածկելով Քրիստոսի քաղցրութիւնը:

«Իմ ուրախութիւնս դուք լեցուցէք, նոյն խորհուրդը ունեցէք, նոյն սէրը ձեր մէջ ունենալով, մէկ շունչ, մէկ մտածմունք Փիլ. 2: Նոյնպէս մենք շատուորներս մէկ մարմին ենք Քրիստոսով եւ ամէն մէկերնիս իրարու անդամներ ենք» Հռով. ԺԲ. 5: Ոչ մէկը կրնայ գիտնալ զայս մեր կեանքերը գիտելով: Անորոշ կերպով կը յուսանք որ մահը պիտի փոխէ այս բաները. բայց այսպիսի խորհուրդով մը Տէրը կ'անարգենք, ինչու որ նա այս փոփոխութիւնը կրնայ ընել հոս, հիմա, եթէ պատրաստ ենք զինք վճարելու:

Շատ ժամանակ առաջ, Աթէնքի մեծութեան օրերուն Tucydides ցովհանաւերու թիափարներու նկատմամբ բառ մը կը գործածէ զոր հոմանիշ է «ստիպել միասին թիափարելու»: Պօղոս այս բառն է որ կը գործածէ Բ. Կոր. Ե. 14ի մէջ: Ջանանք թափանցելու այս համարին խոր իմաստին: «Վասնզի Քրիստոսի սէրը մեզ կ'ստիպէ (միասին թիափարելու), քանզի մեր դատումը այս է, որ եթէ Մէկը ամենուն համար մեռաւ, ուրեմն ամէնն ալ մեռան: Եւ ամենուն համար մեռաւ, որպէսզի կենդանի եղողները ալ՝ իրենց անձերուն կենդանի չըլլան, հապա Անոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարութիւն առաւ»: Տար Աստուծոյ որ Աչքերնիս



մեր Մեծ Առաջնորդ, հրամանատար Քրիստոսի յառած, ու իր սիրուն ուժովը կարենայինք միասին թիավարել մինչև որ արշալոյսը ծագի ու շուքերը անհետանան ու կարողանանք կոխել խաւարէն դուռս, մեր փափաքած նաւահանգիստին երկնային աստիճանն վրայ:

Ուստի, չե՞նք ուզեր մեր տկարութիւնը ճանչնալով իրեն գալ, գիտակցելով որ այս անգոյշ քննադատութեան սովորութիւնը անշատման եւ բաժանման ի՞նչ ահաւոր զօրութիւն մը սննի, նա թող զմեզ ամէջնելով, խոնարհեցնելով մեր մէջ իրականացնէ իր մեծ ազօրութիւնն սա մասը, «Որպէսզի ամէն ալ մէկ ըլլան, ինչպէս Դուն ով Հայր Իմ մէջ» ու Ես Քու մէջդ, որպէսզի անոնք ալ մեր մէջ մէկ ըլլան, որպէսզի աշխարհ հաւատալ թէ Դուն զրկեցիր զիս եւ այն փառքը զոր Դուն ինծի տուիր, Ես անոնց տուի, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս Մենք մէկ ենք (Ես անոնց մէջ եւ Դուն Իմ մէջ) որպէսզի իրենք կատարեալ ըլլան միութեան մէջ, ու աշխարհ զիտնայ թէ Դուն զրկեցիր զիս, ու սիրեցիր զանոնք՝ ինչպէս զիս սիրեցիր» (Յովհ. ԺԷ. 21-23):

Ձեռք կրնար, չենք համարձակիր այս էջերը վար դնել եւ դարձեալ ետ երթալ հին կեանքին, զիտնալով թէ ի՞նչ զին վճարուած է այս միութեան կարելիութիւնը զնկու համար. նոյն ինքն մեր սիրելի Փրկչին կեանքը:

Ազատ թարգ. Անգլիարէնէ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

## «Մէկ ԲԱՆ ՄԻԱՅՆ ԵՐԳԵԼ Կ՝ՈՒՁԵՄ»

Անոր, որ զիս Յիսուսի առաջնորդեց

Ասկէ աւելի մեծ Սէր մէկը չկրնար ունենալ,  
որ մէկը իր կեանքը իր բարեկամներուն համար դնէ:  
Յովհ. ԺԵ. 13

Եթէ Կեանքըս անեզրօրէն, անվախճան  
Դարերուն պէս երկարի՝  
Այդ անհատնում օրերուն մէջ յաւիտեան,  
Ես՝ լիաթոք, սիրտ-արի,  
Մէկ բան միայն երգել կ'ուզեմ,  
— Յիսուս, Քու Սէրըդ վրսեմ:—

Եթէ Միտքըս անգուգելի ձիրքերով  
Դառնայ հանճար մ'անկշիռ՝  
Ես մտային այդ գերբնական ուժերով  
Բոլորակամ եւ արբշիռ,

Մէկ բան միայն երգել կ'ուզեմ,

— Յիսուս, Քու Սէրըդ վրսեմ:—

Եթէ Սիրտըս որպէս ովկեան անյատակ  
Իր եզերքները բանայ՝  
Փոթորկայով բաղձանքներովս անպարփակ,  
Ես մեծաձայն, հոգեհրմայ,  
Մէկ բան միայն երգել կ'ուզեմ,  
— Յիսուս, Քու Սէրըդ վրսեմ:—

Եթէ Հոգիս տիեզերքի պէս անհուն,  
Դառնայ միջոց մ'անսահման,  
Անպարագիծ անկորութիւնըս հաւքուն,  
Խոր մարմաչով մ'անպայման,  
Ես մէկ բանով լեցնել կ'ուզեմ,  
— Յիսուս, Սիրովըդ վրսեմ:—

Ու այս անմահ չորս լարերով ներդաշնակ,  
Էութիւնըս կը լարեմ,  
Եւ ամէն օր ամէն սրտի դռընփակ  
Ես նոյն երգը կը կրկնեմ,  
Ընկե՛ր, քեզի երգել կ'ուզեմ,  
— Աստուծոյ Սէրը վրսեմ:—

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Օիթա

ԿԵՆԱՅ ԱՅՐՈՒՆԻՐԷՆ

## ԴՈՒՐՍ ՊԻՏԻ ԶՀԱՆԵՄ

Ան որ Ինծի կուգայ բնաւ դուռս պիտի չհանեմ:  
Յովհ. Զ. 37

Յովհաննէս հակառակ որ քրիստոնեայ ծնողաց զաւակ էր, սակայն մինչև վերջ անտարբերութեամբ կ'ապրէր: Ժամանակէ մը ի վեր ալ խլիրդէ ծանրօրէն քննուած, գիտէր թէ երկնաւոր ասպարէզին վախճանին հասած էր: Այն որ հիմա իրեն կը սպասէր, այն՝ որու ինք արժանի պիտի ըլլամ կ'ըսէր, յաւիտենական դատապարտութիւնն էր:

Օր մը խնդրեց որ զինքը տեսնելու երթանք: Դասինք եւ զայն գտանք իր անկողնին մէջ պառկած, տխուր եւ սարսափելի հիւանդութեանէն բուրդովին ուժասպառ: Սակայն իր մարմնոյ ցաւերը որ շատ մեծ էին, բազդատմամբ իր հոգւոյն ցաւերուն ոչինչ էին: Իր ղէմքը անձկութեան եւ վիշտերու հետքերը կը կրէր:

Հետեւեալ խօսքերը, շեշտով մը յիշեցի անոր.



«Ամէն անոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան Իր անուանը» Յովհ. Ա. 12:

Ինծի դառնալով ըսաւ, «Աստուծոյ զաւակ չեմ ես, շնորհքը արհամարհեցի, ինծի համար ներում չկայ, ես առիթը փախցուցի... հիմա շատ ուշ է»:

— «Խաչին վրայի աւագակին աղօթքը ըրի՞ր, հարցուցի, խնդրեցի՞ր արդե՞ք, յիշէ՞ զիս Տէր, Անոր որ ըսաւ, «Ան որ Ինծի կուգայ, բնաւ դուրս պիտի չհանեմ»:

Սենեակին մէջ իր սնարին վրայ հակդնէր մի քանի անձներ էինք: Մեծ լուծիւն մը կը տիրէր, Տէր Յիսուսի ներկայութիւնն ալ զգալի էր. Ան Իր կորսուած ոչխարը կը փնտռէր: Յանկարծ հիւանդը ազադակեց անձկութեամբ, բայց բարձր ձայնով մը, «Տէր Յիսուս, Դուն որ ըսիր, ան որ Ինծի կուգայ բնաւ դուրս պիտի չհանեմ, ես Քեզի կուգամ այնպէս, ինչպէս որ խաչին վրայի աւագակը եկաւ: Յիշէ՞ զիս Տէր. Քեզի բերելու ուրիշ բան մը չունիմ, հապա միայն իմ մեղսալից կեանքս: Յիշէ՞ զիս Տէր Յիսուս, փրկէ՞ զիս»:

Ներկաներէն իւրաքանչիւրն աւելցուց. Ամէն:

Այս փոքր ճիզը ուժաթափ ըրաւ հիւանդը որ իր կնոջ խնդրեց զինքը քիչ մը մինակ թողուլ, բայց դեռ բոլորովին երթալու չէինք, հազիւ թէ քովի սենեակը անցանք, մահամերձը արեան մեծ հոսում ունեցաւ բերնէն: Իր կինը որ մահիճէն չէր հեռանար, աեսնելով այս արիւնը, կարծեց թէ վախճանը հասաւ: Բայց դեռ ատենը եկած չէր. Աստուած թոյլ տուաւ որ նա վկայութիւն տայ Իր շնորհքին: Մօտ կէս ժամ վերջ մեզ դարձեալ իր քով կանչեց:

Իր դէմքին վրայ նախկին անձկութենէն բան մը չէր մնացած, եւ նոյնիսկ խաղաղ ժպիտ մը ընկերացաւ իր այս խօսքերուն հետ, «Յիսուս ըսաւ, ան որ Ինծի կուգայ, բնաւ դուրս պիտի չը հանեմ: Շնորհակալ եմ Տէր Յիսուս, Դուն զիս ընդունեցիր. հիմա ես ալ Աստուծոյ զաւակ մըն եմ»:

Մեր սիրտերը յոգուած էին. նախ զայն տեսանք յուսահատ ու թշուառ, բայց հիմա կը զրտնէինք զուարթ եւ խնդուն, բերանը փառաբանութեամբ լեցուն: Մենք առիթն ունեցանք միասնաբար շնորհակալ ըլլալու եւ օրհնելու մեր Փրկիչը: Սիրելի հիւանդը ապրեցաւ երեք օր եւս, եւ մինչեւ վերջը նա հաճոյքով կը կրկնէր, «Ան որ Ինծի կուգայ, բնաւ դուրս պիտի չհանեմ»:

Թարգ. Մ. Կ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

## ՓՐԿՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԵՐ

Մեզի շատ ղեռնարկն է մտածել այն կերպը, որով շատ անգամ Աւետարանը կը ներկայացուի աշխարհի: Փրկութեան խօսքերը, ինչպէս որ մեզի տրուած են Նոր Կտակարանին մէջ, դժբաղդաբար զանց առնուած կամ մոռցուած են:

Հոգիին փրկութիւնը եւ անկէ բխած օրհնութիւնները կախեալ կ'ընեն անձնական ջանքերէն որոնց միայն կը միանայ Յիսուս Քրիստոսի խաչին վրայի գոհաբերութիւնը ի Գողգոթա:

Կ'աւելցնեն նաեւ թէ մինչեւ վերջին դատաւարանը ոչ մէկը կրնայ գիտնալ թէ փրկուած է կամ ոչ:

Այս տեսակ ուսուցում մը Ս. Գրոց լոյսը չունի: Այս խորհուրդը անպատուաբեր է Տէր Յիսուս Քրիստոսի լիապէս կատարած գործին: Երբ նա խաչին վրայէն Հօրը կ'աւանդէր Իր հոգին, բարձր ձայնով ըսաւ, «Ամէն բան կատարուեցաւ»:

Գործերը կը սկսին փրկութենէ վերջ եւ ոչ թէ առաջ: Ինչ որ մենք Աստուծոյ կընենք, ոչ թէ ներում ընդունելու կամ մեղքերու թողութիւն առնելու համար է, ոչ, այս բոլորը Աստուծոյ շնորհքին ձրի պարգեւն է: Մենք կը ծառայենք մեր Տէրոջը մեզ սիրելուն համար, քանզի նա Իր սուրբ արիւնովը ծախու առաւ մեզ աշխարհէ:

Ահաւասիկ օրինակ մը որ կը լուսարանէ փրկութեան այս հարցը:

Այսօր ճաշի հրաւիրուած էի բարեկամներու տունը. շատ սիրով եւ վեհանձնութեամբ ընդունեցին զիս: Ինծմէ չպահանջեցին որ ես իմ կերած ճաշս վճարեմ, կամ հետս ուտելիք ալ տարած չէի: Բարեկամներս զիս հրաւիրած էին, եւ արդէն սեղանին վրայ կար ամէն ինչ բան որ պէտք էր: Բայց ենթադրեցէք որ ես ծունկի գալի առատօրէն սպասարկուած սեղանին առջեւ եւ աղօթէի մէկ ժամ ջերմեռանդութեամբ. «Ո՛հ, կը խնդրեմ, այս կերակուրէն ինծի ալ տուէք» ի՞նչ պիտի մտածէին իմ բարեկամներս, ձեզի կը հարցընեմ:

Աւա՛ղ, ճիշդ նոյնպէս կ'ընեն այսօր հազարներով. անգաղար կը խնդրեն երբ Աստուած կը հրաւիրէ զանոնք եղած իրականութիւնը ընդունելու:

Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի Յովհ. Գ. 36:

Ամէն Իրեն հաւատացողներ Իր անունով մեղքերու թողութիւն կ'առնեն Գործ. Ժ. 43:

Աստուած մեզ Իրեն հետ հաշտեցուց Քրիստոսի ձեռքով... կ'ազաչենք ձեզի Քրիստոսի կող-



մանէ, հաշտուեցէք Աստուծոյ հետ Բ. Կոր. Ե. 18-20:

Ան ոչ ծարաւ է թող զայ եւ ան որ կ'ուզէ, կենաց ջուրը ձրի առնէ Յայտ. ԻԲ. 17:

Եթէ դուք ծարաւ էք ներումի եւ խաղաղութեան, եկէք Անոր որ ամէն բան կատարեց, որպէսզի դուք ալ փրկուիք. եկէք Անոր որ յաւիտենական կեանք կուտայ այն ամենուն որ Իրմէ կը խնդրեն շնորհքով:

# ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ԴԵԿՏ. 2.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԻԲՐ ՎԿԱՅ

1. Շատ կարեւոր է որ քրիստոնեաներ Յիսուսի փրկութեան աւետիսը տարածեն Հոով. Ժ. 13, 14:

2. Ամէն մարդ քարոզիչ ըլլալու չէ ծնած Հո. Ժ. 15:

3. Բայց ամէն մարդ կրնայ վկայել Հոով. Ժ. 10:

4. Վկայութիւն Յայտ. ԺԲ. 11: Դան. 2. 10, 11:

5. Մի ամչնար Բ. Տիմ. Ա. 8:

6. Բարի լուրը կեանք եւ խաղաղութիւն կուտայ Յովհ. Դ. 36:

ԴԵԿՏ. 9.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԻԲՐ ՈՒՍՈՒՑԻՉ

Մարդիկ կան որոնք կը խորհին թէ իրենք ուսուցիչներու չեն կարօտիր, թէ Աստուած միայն պիտի սորվեցնէ իրենց ուղղակի:

1. Այո, Աստուած պիտի սորվեցնէ Սաղ. ՀԱ. 17. Ա. Թեա. Դ. 9:

2. Բայց Աստուած նաեւ ուսուցիչներ դրած է եկեղեցիին մէջ Ա. Կոր. ԺԲ. 28:

3. Երբ սկսելու է սորվիլ Առակ. ԻԲ. 6:

4. Ուսմունքը ինչե՞ր կը կատարէ Առակ. Ե. 1-14 (մեղքի ֆիզիքական արդիւնքները եւ ափսոսանքը):

5. Արթնութենէ մը առաջ ուսմունքի նախապատրաստութիւնը կայ Դ. Թադ. ԻԳ. Բ. Մնաց. ԺԷ. 6-9:

6. Սորվեցնելիք կարգ մը բաներ Տիմ. Բ. 3:

7. Ամէնը ուսուցիչներ չեն Ա. Կոր. ԺԲ. 29:

8. Պօղոս առաքեալ իբր ուսուցիչ Եփս. Ե. 1-33 2. 1-12:

ԴԵԿՏ. 16.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԵՒ ՏԷՐՈՋԸ ԸՆԹՐԻՔԸ

Տէրոջը ընթրիքը իբր նշան կամ նախատիպ՝ հաստատուած էր Յիսուսի ծնունդէն շատ տարիներ առաջ եւ կը նախահռչակէր մեր աշօրուան կատարած հաղորդութեան խորհուրդը, այսինքն Յիսուսի մահը եւ յարութիւնը: Հրէից Չատիկը Տէրոջ ընթրիքին մէկ նախատիպն էր:

Բաղդատէ Հին Կտակարանը Նորին հետ:

1. Բաղդ. Ելից. ԺԲ. 1-28 — Մատթ. ԻԶ. 26-30 Յովհ. ԺԳ. 1ին հետ:

2. Այս է իմ մարմինս Յովհ. Դ. 32: 2. 51, 54:

3. Այս է իմ արիւնս Կող. Ա. 20: Մատթ. ԻԶ. 28, Եբր. Թ. 22:

ԴԵԿՏ. 23.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏՈՒՆԴ (Ծննդեան դաս)

Երբ հովիւները տեսան հրեշտակը եւ Տէրոջը փառքը, խիստ շատ վախցան, բայց հրեշտակը ըսաւ անոնց, «մի վախնաք»: Ասոնք խրախուսիչ բառեր են: Նոյն բառերով քաջալերուեցան ուրիշներ ալ Ս. Գրքին մէջ:

Կարգ մը անձեր, որոնց Տէրը ըսաւ, «մի վախնաք»:

1. Աքրահամ Ծննդ. ԻԶ. 24:

2. Յակոբ Ծննդ. ԽԶ. 3

3. Մովսէս Թուոց ԻԱ. 34:

4. Դէղէօն Դատ. 2. 23:

5. Իսրայէլ Եսայ. ԽԱ. 40:

6. Դերեզման զացող կիները Մատ. ԻԸ. 5:

7. Բոլոր հաւատացեալներ Ղուկ. ԺԲ. 32:

8. Պօղոս Առաք. Գործ. ԻԷ. 24:

ԴԵԿՏ. 30.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸԼԼԱՆՈՒ ԱՊԱՑՈՅՑԸ

1. Սրտով կաւատալ մտքով հաւատալին շատ տարբեր բան է Հոով. Ժ. 10: Մենք կրնանք գիտնալ թէ այսինչ բանը սխալ է, բայց դեռ շարունակել այդ սխալին մէջ: Միայն երբ սրտով գիտենք եւ համոզուած ենք բանի մը սխալ կամ շիտակ ըլլալուն՝ այն ատեն կը ջանանք բարին ընել: Երբ մեր սրտերուն մէջ կը հաւատանք թէ Յիսուսը Քրիստոսն է, յայնժամ պիտի սիրենք զԱյն եւ պիտի ջանանք Իրեն հաճելի եղած բաները ընել:

2. Պէտք է նոր սիրտ մը ունենանք Երեմ. ԻԴ. 7: Սաղ. ԾԱ. 10: Եղեկ. ԺԸ. 31:

3. Պէտք է մեր սրտերը մաքուր պահենք Սաղ ՃԼԹ. 23:

4. Ինչո՞ւ Մատթ. ԺԵ. 19: Երեմ. ԺԷ. 9:



ԿԵՆՈՍԿՐԱԿԱՆ

## ՃԱՆՆ ՈՒՅՍԼԻ

Որքան ալ շահեկան ըլլան Ուէսլիի մանկական ռարիները, մենք ստիպուած ենք անոր պատանկութեան շրջանին վրայէն արագ անցնիլ, Բանբերի սեղմ էջերուն խնայելու ու մեր ընթերցողներուն տալու համար Ուէսլիի ապաշխարութեանէն յետոյ եղած անոր կեանքին ու գործունէութեան մասին առաւելագոյն նկարագրութիւնը ինչ որ համաշխարհային հոգեւոր արժէք ու կարեւորութիւն ունի: Այս թիւին մէջ պիտի ամփոփենք անոր հոգեկան պայքարը մինչեւ իր նոր կեանքի վերստին ծնունդը:

Մինչեւ իր տասը տարեքը Ուէսլիի ուսուցչուհին իր մայրը եղաւ, որմէ յետոյ նա ընդունուեցաւ Լոնտոնի Չարթըր հաւուզի դպրոցը ուր նա մնաց հինգ տարիներ: Հոս անոր մանկական քարեպաշտութիւնը փոխանակ ժողովականէն անհատական հաւատքի անցնելու՝ խառնաման շրջան մը ունեցաւ: 1720ին երբ նա Օքսֆորտի համալսարանին ամենէն նշանաւոր հաստատութիւններէն միոյն, «Քրիստոսի եկեղեցի» կոչուած գոլէճը մտաւ, Ուէսլի զեռ կոչում մը չունէր եւ իր ընկերակից երիտասարդաց բազմութեան շատ չէր տարբերէր բարեպաշտութեամբ: 1725ին նա իր ծնողաց գրեթէ կը փափաքի Աւետարանի պաշտօնէութեան նուիրուիլ: Հայրը պատասխանեց, «Պաշտօնէութեան մէջ մի մտնէր Հեղիի որդոց նման պատառ մը հաց ուտելու նպատակաւ (Ա. թագ. Բ. 36) հապա զԱստուած փառաւորելու եւ մարդոց օգտակար ըլլալու համար»: Իր մայրը պատասխանեց, «...կը յուսամ թէ տրամադրութեանցդ այս փոփոխութիւնը Աստուծոյ Սուրբ Հոգիին գործն է, եռանդագին կը մաղթեմ որ ինքզինքդ խիստ անձնաքննութենէ մը անցնես, տեսնելու համար թէ հիմնուած յոյս մը ունի՞ս փրկուած ըլլալուդ եւ թէ հաւատք ու ապաշխարութիւն ունի՞ս, որոնք ինչպէս գիտես, Աստուծոյ հետ դաշինք կնքելու պայմաններն են ...եթէ ոչ քու ընտրութիւնդ քեզի ողբերգութեան մը թափել տուածէն աւելի արցունքներ թափել պիտի տայ»:

Ուէսլի իր մօր խրատին հետեւելով իր աստուածաբանութեան սերտողութեանց միացուց նաեւ իր ներքին հոգեւոր կեանքը զարգացնող սերտողութիւններ. գլխաւորապէս թովմաս Գեմբացիի «Նմանողութիւն Յիսուս Քրիստոսի» եւ Երեմիա թէյլըրի «Սուրբ ապրելու եւ սուրբ մեռնելու

կանոններ» անունով գիրքերը: Նա շատ շուտիւ մոգուեցաւ թէ «ճշմարիտ կրօնքին օթեկանը սիրտն է եւ թէ Աստուծոյ օրէնքը պէտք է կառավարէ նոյնքան նաեւ մեր խորհուրդները որքան մեր խօսքերն ու գործքերը: Այս համոզման տակ նա որոշեց ներքին եւ արտաքին սրբութեան հասնիլ իր քարեպաշտական հրահանգներուն կատարումը բազմապատկեց, փոխանակ տարին երեք անգամ հազորդութիւն առնելու, սկսաւ ամէն կիրակի հազորդուիլ եւ ամէն օր մէկ երկու ժամ առանձնաճաշ աղօթքի եւ սերտողութեան համար: Բայց երկար տարիներ տեւող տաժանելի ճգնաժամէ մը, ինչպէս նաեւ հոգեւոր պաշտօնէութենէ մը յետոյ ստիպուեցաւ խոստովանիլ թէ ինք զեռ չունէր փրկող հաւատքը: Յիրաւի իր Աւետարանի պաշտօնէութեան նուիրուելու որոշումէն 13 տարիներ անցան որոշ ընթացքին ճան Ուէսլի աստուածաբանութիւն ուսանեցաւ, վերապատուելի ձեռնադրուեցաւ, եկեղեցի կառավարեց, հոգիներ Աստուծոյ առաջնորդեց, միախնարութեան զնայ եւ վերադարձաւ առանց զեռ ինքը իր հոգիին փրկութեան վստահութեան հասած ըլլալու: Այս շրջանէն ամենէն շահեկան մասերն են, (ա) Ուէսլիի կեանքը Օքսֆորտի համալսարանին մէջ ուր ծնունդ առաւ մեթոտականութիւնը, (բ) Ուէսլիի միախնարական կեանքը զէպի Ամերիկա (Ճորճիա) որու ընթացքին նա պատրաստուեցաւ ընդունելու Սուրբ Հոգիէն իր նոր ծնունդը եւ զօրութեան մկրտութիւնը որով նա կրցաւ յետագային ցուցնել թէ երկիրը փրկելու համար Աստուծոյ ճշմարիտ մէկ մարգարէն աւելի ազդեցիկ եւ կարող է քան հազարաւոր քաղաքագէտներ, զինուորներու հսկայ բանակներ եւ բազմաթիւ միլիոնատէրերու ռսկիները միասնաբար: Յիրաւի Անգլիա ամէն տեսակէտով կը նմանէր հոգեւարք հիւանդի մը, որմէ ամէն բժիշկ իր յոյսը կտրած եւ զայն մահուան դատապարտած էր, երբ Աստուած ճան Ուէսլին ձեռք առաւ եւ անոր միջոցաւ տեսակ մը մահէն յարուց Անգլիան, ազդելով նաեւ կերպ մը ուղղակի կամ անուղղակի ամբողջ աշխարհի: Ինչպէս կ'ըսէ անգլիացի հեղինակ մը, «25ք կրնար Ուէսլին կտրել մեր ազգային կեանքէն: Ոչ մէկ անհատ կրցած է ազդեցութիւն գործել այնքան մեծ թիւով միտքերու վրայ, ոչ մէկ անհատական ձայն կրցած է հասնիլ այնքան մեծ թիւով սրտերու, ուրիշ ոչ ոք կրցած է մատուցանել մէկ կեանքով այնքան շատ ծառայութիւն Անգլիոյ, քան ճան Ուէսլի»:

Ա. Օքսֆորտի համալսարանը — Նախախնամու-



Թիւնը այնպէս կարգադրեց որ Ուէսլի Օքսֆորտ վերադառնայ իբր ուսուցիչ՝ հոն իր ուսմունքը աւարտելէն քանի մը տարի յետոյ, ուսուցչութենէ աւելի հոն կառավարելու եւ պատրաստելու երիտասարդներու այն խմբակը որ չորս հոգիով սկսաւ որոնց թիւը երբեք 15ը չանցաւ՝ և որ պատրաստեց Ճան Ուէսլիի, Չարլզ Ուէսլիի, Մօրկլընի եւ Հուայթֆիլտի նման հոգիներ որոնք քիչ յետոյ Անգլիոյ ժողովուրդը պիտի աւետարտէին փողոցներու մէջ եւ հրապարակներու վրայ տասնեակ հազարներով, երկրին մէկ ծայրէն միւսը: Յետագայ թիւի մը մէջ մենք կ'անդրադառնանք Չարլզ Ուէսլիի եւ Ճօրճ Հուայթֆիլտի: Այս երիտասարդները ամէն երեկոյ մէկտեղ կը հաւաքուէին եւ աղօթքով, սերտողութեամբ ու եղբայրական խօսակցութեամբ կը պարտէին: Անոնց խիստ բարեպաշտութիւնը ծաղրանքի առարկայ դարձաւ համալսարանին մէջ եւ զանոնք «սուբերու քլիպ» կոչեցին եւ Ճան Ուէսլին «սուբերու քլիպին պատուելին»: Անոնց ապրելակերպին, գործելակերպին մէթոտով եւ կանոնաւոր ըլլալուն անոնք կոչուեցան նաեւ «մեթոտականներ»: Ի սկզբան ծաղրանքի համար տրուած այս մակդիրը, յետագային պատուոյ անունը եղաւ Մեթոտական եկեղեցիին: Անոնք ամենէն առաջ խիստ ուշադիր հետեւողներ էին Անկլիքան եկեղեցւոյ աւանդութեանց, նոյնիսկ կարգ մը անգործածելի դարձած օրինաց: Այսպէս կանոնաւոր կերպով ծմբէն զատ անոնք չորեքշաբթի եւ ուրբթի օրերը մինչեւ կէսօրէ ետքը ժամը 3ը ծոմ կը պահէին: Յաճախ կը խօսակցէին հաղորդութեան հացին մէջ Քրիստոսի իրական ներկայութեան կամ բացակայութեան, հաղորդութեան գինիին մէջ Զուր խառնելու կամ չխառնելուն, խոստովանութեան եւ ուրիշ ծիսական հարցերու վրայ, եւ եթէ անոնց աւելի գործնական հոգեւոր կեանքը չըլլար, մեթոտականութիւնը իր սաղմին մէջ իսկ միայն ծիսակատարութեամբ խեղդուելու վտանգին մէջ կը գրտնւէր: Անոնցմէ մին օր մը խիստ շահեկան հոգեւոր խօսակցութիւն մը ունեցաւ հասարակաց բանտին մէջ մահուան դատապարտուած ոճրագործի մը հետ: Նա հրաւիրեց իր ընկերները իր օրինակին հետեւիլ: Աստուծոյ ծառայելու ծառաւովը լեցուած այս երիտասարդաց համար ճշմարիտ վայելք մը եղաւ այս, եւ անոնք որոշեցին այս նման այցելութիւնները ընել ոչ միայն բանտարկեալներուն, հապա նաեւ քաղաքին աղքատ թաղերու մէջ խեղճ ընտանիքներուն: Ասիկա ըստիպեց զիրենք անհատական խնայողութիւններ

ընել կարենալ նաեւ նիւթապէս օգնելու համար անօթիներուն: Ճան Ուէսլի այս կէտին մէջ ամենէն բարձր օրինակը տուաւ: Սկիզբը նա կը շահէր տարեկան 750 ֆրանք (սոկեղրամ) եւ սովորութիւն ըրած էր 700ով ապրիլ, մնացածը աղքատաց տալու համար. ու երբ իր եկամուտը յաջորդաբար 1500ի, 2250ի եւ 3000ի բարձրացաւ, նա երբեք 700էն աւելի չծախսեց ու մնացած 2300ը աղքատաց կը բաշխէր: Դրամին չափ եւ աւելի խնայողութեամբ նա կը գործածէր իր ժամանակը: Այս օրերուն էր որ նա ինքն իրեն սովորութիւն ըրաւ ամէն առաւօտ ժամը 4ին անկողնէն ելլել: 60 տարիներ յետոյ նա կը գրէր, «Աստուծոյ շնորհքով այն օրէն ի վեր միշտ ժամը 4ին ելած եմ, եւ կրնամ ըսել թէ այս հաշուով ամիսը քառորդ ժամուան իսկ անքնութիւն չեմ ունեցած»: Առաւօտեան առաջին ժամը աղօթքի եւ Սուրբ Գիրք կարդալու յատկացուած էր եւ օրուան մնացած ժամերը խիստ կարգապահութեամբ մը կ'օգտագործուէին: 1731ին իր աշակերտաց միոյն կը գրէր, «Կեանքիդ մէկ օրն իսկ ապահովուած չէ, ուստի իմաստուն պիտի չըլլաս, եթէ անկէ մէկ վայրկեան իսկ կորսնցնես: Սորվելու համար հետեւեալ կանոնները պահէ.—

1. Հասնելիք նպատակդ առաջուրնէ որոշէ:
  2. Մի կարդար ոչ մէկ գիրք որ այս կամ այն կերպով քու նպատակիդ չի ձգտիր:
  3. Գիրքերուն մէջէն ամենէն լաւերը ընտրէ:
  4. Մէկ գիրքին սերտողութիւնը չմնացուցած միւսը մի սկսիր:
  5. Զանոնք այնպէս կարգով մը կարդա որ այս օրուան կարգացածդ երէկուանը լուսաւորէ եւ հաստատէ:
- Հոս մեթոտականութիւնը դեռ իր Երօրոցին մէջ էր: Անոր մանկութիւնը դժուար եղաւ: Օքսֆորտի համալսարանը անոր համար առանց սիրոյ ստնտու մը եղաւ: Բայց Աստուած կը հսկէր եւ երբ ժամանակը հասած սեպեց՝ նա մշուշին մէջ խաբխափող ծիսակատարութեան եւ միսթիքականութեան մէջ տարուբերող եւ ամբողջ համալսարանին ծաղր ու ծանակը դարձած երիտասարդներու այս պզտիկ խումբէն միսիոնարական հզօր եկեղեցի մը երեւան բերաւ:
- Բ. Ուէսլիի միսիոնարական կարի կեանքը— 1733ին Ուէսլի հրաւէր ստացաւ Ամերիկայի անդլիացի զաղթականաց եւ տեղացի հնդկներուն մօտ իբր միսիոնար երթալու: Այս հրաւերին մէջ նա Աստուծոյ կոչը տեսաւ եւ իր մօրմէն խորհուրդ հարցուց: Մայրը պատասխանեց, «Եթէ 20



տղաք ունենայի, պիտի ուրախանայի անոնց ամէնն ալ նման պաշտօնի մը նուիրուած տեսնելով, եթէ նոյնիսկ հարկ ըլլար յօժարել զանոնք այլեւս բնաւ չտեսնելու: Իսկ Ուէսլի այսպէս կը սահմանէր իր միտնարութեան նպատակը բարեկամի մը զրած իր մէկ նամակին մէջ, «Հայրենիքս թողելով միտնարութեան երթալու մէջ իմ գլխաւոր շարժառիթս՝ այն յոյսն է թէ այս միջոցով հոգիս պիտի փրկեմ բոլորովին Աստուծոյ փառքին համար ապրելով: Կը յուսամ Քրիստոսի Աւետարանին ճշմարիտ նշանակութիւնը հասկնալ զայն հեթանոսներուն քարոզելով: Անոնք ոչ չքմեղանքի բացատրութիւններ ունին Ս. Դրոց ճշմարիտ պահանջներէն խուսափելու, ոչ փիլիսոփայութիւն զանոնք ապականելու, ոչ ալ զգացական ու փառամոլ մեկնիչներ՝ անախորժ ճշմարտութիւնները իրենց ախորժիկ դարձնելու: Անոնք ոչ կողմնակցութիւններու «խաթ»եր ունին, ոչ նկատի առնելիք շահեր, եւ ուստի կըրնան Աւետարանը իր պարզութեանը մէջ ընդունիլ: Անոնք պզտիկ մանուկներու պէս խոնարհ են եւ փափաքող Աստուծոյ կամքը ճանչնալու եւ եռանդուն զայն կատարելու»:

«Կը յուսամ իմ վարձքս հաւատացածներուս մակարդակին բարձրացնել: Երբ հոս զիս շրջապատող խել մը փորձութիւններէն հեռու եւ ազատ ըլլամ, պիտի կրնամ առանց ռեւէ մէկը վերաւորելու վախին, անունդի համար երկրին պետողներով եւ ջուրով գոհանալ: Հնդկի հիւրասկ մը ճոխութեան ճաշակները եւ որկրամոլութիւնը գոհացնելու փորձութիւններ չընծայեր»:

«Կը յուսամ, անգամ մը որ Անգլիոյ հոգին բաժնուրիմ իբր Աստուծոյ զրկուած քարոզիչի հանգամանքով, երբեք Հարտասանել խօսք մը որ այս հանգամանքիս չվայելեր»:

«Ես մանկութենէս ի վեր մեծ մեղաւոր մը եղած եմ, ու տակաւին հիմա յիմարական փափաքներով լեցուած, բայց փտտահ եմ, երբ ինքս լաւ մը ապաշխարած ըլլամ՝ Աստուծոյ զիս պիտի զործածէ իմ եղբայրներս զօրացնելու եւ Իր անունը հեթանոսաց քարոզելու»:

Ուէսլի թէեւ կռապաշտներուն մասին խաբկանքներով կ'օրօրուէր՝ բայց ինքն իր անձին վրայով այդպէս չէր: Նա կ'զգար աւելի կենդանի աստուածապաշտութեան մը հասնելու ծարաւը, բայց միշտ սխալ ճամբայ կ'ընտրէր ասոր հասնելու իր միջոցներուն մէջ: Ու երբ երկու տարի ու չորս ամիս յետոյ յուսախաբ Անգլիա կը վերադառնար, իր օրագրութեան մէջ կը գրէր հոգով. է. գլխուն նման սա սրտակեղէք

խօսքերը.— «Ամերիկա հնդիկները դարձի բերելու գացի, բայց ո՛հ, ո՛վ զիս դարձի պիտի բերէ. ո՛վ զիս պիտի աղաւէ իմ չար եւ ահաւոր սրտէս: Իմ կրօնքս ամառուան գեղեցիկ կրօնք մըն է. կրնամ անոր մասին խօսիլ, կրնամ նոյնիսկ անոր հաւատալ որքան ժամանակ որ վըտանդը հեռու է, բայց անմիջապէս որ մահը ինձ դէմ առ դէմ կը նայի, իմ հոգիս կը խռովի ու ես չեմ կրնար ըսել «Ինծի համար մեռնիլը օգուտ է», ո՛հ, ո՛վ զիս պիտի աղաւտէ մահուան այս վախէն, ի՞նչ ընեմ, ո՛ւր փախչիմ անկէ ազատելու համար: ...Ես գացի հնդիկներուն, քրիստոնէութեան էութիւնը սորվեցնելու, բայց ես ինքս ի՞նչ սորվեցայ այս ժամանակին: Ես սորվեցայ զայն որ չէի կասկածեր, թէ ես որ ուրիշները դարձի բերելու կ'աշխատիմ, ես ինքս բնաւ դարձի եկած չեմ: Ես սորվեցայ թէ «Աստուծոյ փառքէն պակասած եմ», թէ իմ սիրտս բոլորովին ապականած ու զարշիւի է, այնպէս է նաեւ իմ կեանքս, քանի որ «չար ծառը բարի պտուղ չկրնար տալ», Ես սորվեցայ թէ աստուածային կեանքէն զրկուած ըլլալով բարկութեան որդի մը եւ դժոխքի ժառանգորդ մըն եմ: Ես սորվեցայ թէ իմ գործքերս, Հարչարանքներս, իմ արդարութիւնս, հեռի են զիս հաշտեցնելու Աստուծոյ հետ որ բարկացուցած եմ, եւ հեռի են իմ գլխուս մաղերէն աւելի շատ եղող մեղքերէն ամենափոքրն իսկ քաւելու ծառայելէ. անոնք չեն կրնար Աստուածային արդարութեան ակնարկին առջեւ կենալ, եւ իբր մեղքեր, քաւութեան կը կարօտին: Ես սորվեցայ թէ իմ սրտիս վրայ մահուան վճիռս գրուած կը կրեմ, եւ իմ մէջս զայն ջնջելու ոչ մէկ չքմեղանք չունենալով, ինծի ուրիշ ոչ մէկ յոյս չմնար, եթէ ոչ ձրիաբար արդարանալ Յիսուսով եղած քաւութեամբ. ոչ մէկ յոյս, եթէ ոչ Քրիստոսը փնտռել, զԱյն գտնել եւ «Իր մէջ գտնուիլ, ոչ թէ իմ արդարութիւնս ունենամ որ օրէնքէն է, հապա Քրիստոսի հաւատքովը եղած արդարութիւնը, որ Աստուծոյ է հաւատքով» (Փիլ. Գ. 9):

Ազատ. Թարգ Վ. Ս.





ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

## ՎԱՆՔԻ ՆՈՒՆԵՐԸ

Վանքի յաճախած դպրոցի գիւղացիները շատ լաւ սովորութիւն մը ունէին: Ամէն անգամ որ Ծնունդի ծառը կը լուսաւորուէր իրենց եկեղեցիին մէջ, ծառին տակը մայրիկներուն լուացքի ժամանակ զործածած խոշոր կողովներէն մէկը կը դրուէր:

Ի՞նչ բանի պիտի ծառայէր արդեօք այդ կողովը. օրօրոցի՞, որ պուպրիկ մը հոն դնէին փոխան մանուկ Յիսուսին, որուն նունդը Ծ կը տօնէր համայն աշխարհը: Ո՛չ:

Հանդէսին օրը, երբ օրկանը երգ մը կը նւագէր, բոլոր մանուկները իրենց կարգովը կը յառաջանային դէպի մեծ կողովը, հոն դնելու իրենց նուէրները խեղճ մանուկներու, հիւանդներու եւ կամ միսիրոնարներու համար: Ի՞նչ մեծ երջանկութիւն կը տրիւր հոն այդ վարկեանին ու նաեւ Ծննդեան տօնի նախապատրաստութեան օրերուն, որ ատեն անոնք պատահութիւն ունէին խորհելու եւ ընտրելու խաղալիք մը որ կրնար հաճոյք պատճառել ուրիշի մը: Անոնք օրեր առաջ իրենց դանձանակի դրամով մեծ մարդոց նման իրենց դրացի գիւղին վաճառանոցէն կը գնէին իրենց գեղեցիկ առարկաները: Ամբողջ շաբաթը դպրոցին մէջ, դպրոցէն դուրս ճամբուն վրայ այդ նիւթին վրայ կը խօսէին, խորհելով թէ ամենալաւ նուէրը ո՞վ պիտի պատրաստէր: Եւ երբ Ծնունդին իրենց ծրարները կը բերէին իրենց խորհրդով ու իրենց ձեռքերով պատրաստուած, չուանով կամ ժապաւննով մը կապուած, երբեմն եղեւինի հիւղելով դարդարուած եւ կամ զծագրուած, կ'արժէր տեսնել իրենց երջանկութիւնը երբ իրենց ընծաները ծառին տակը կը դնէին:

\* \*

Արդէն երրորդ Ծնունդն էր Վանքի, որ կ'անցընէր այս ուրախ կիրակնօրեայ դպրոցին մէջ: Առաջին անգամ իր ելեքտրական շոգեկառքի վահաններէն մէկը տուած էր. թէպէտ քիչ մը սկիզբուած էր, սակայն իր կնքամօր տուած գունաւոր մատիտներով նորոգած եւ գեղեցկացուցած էր:

Երկրորդ տարին աւելի լաւ բան մը հընարած էր: Իր պզտիկ սղոցով թռչունի վանդակ մը շինած եւ նուիրած էր, որ մեծ հաճոյք պատճա-

ռած էր ընտանիքի մը, որովհետեւ անոնց մօտակայ ցարասիին գարնան առաջին օրերէն զոյգ մը թռչուններ սովոր էին գալ եւ դնել իրենց բոյնը, կըթելու իրենց ձագերը:

Երրորդ Ծնունդին, տարօրինակ բան, մարդ չէր տեսնէր Վանքին, իր գրքոցէն կամ իր գոյնելու տուփէն բան մը հանելը կամ դնելը. ոչ իր խաղալիքները ոչ ալ իր սղոցը: Իր հայրը, մայրը, քոյրերը շատ կ'ուզէին գիտնալ թէ արդեօք ի՞նչ կը պատրաստէր, ի՞նչ կը երեւակայէր: Վերջապէս շատ հետաքրքիր էին: Երբ իր քոյրերը կը հարցնէին, այնպէս պատասխան մը կուտար որ կը նշանակէր «գիտ հանգիստ թողուցէք»: Այսպէս զայն հանգիստ թողուցին եւ սպասեցին:

\* \*

Ծնունդը հասաւ. Վանքի քոյրերը տեսան որ իր ձեռքը բան մը չկար եւ վստահ էին որ իր գրպանին մէջ ալ բան մը չունի: Սակայն երբ քարոզիչը ծանոյց թէ ժամանակն էր իրենց պատրաստած նուէրները բերելու, Վանք իր ընկերներու խումբին հետ ելաւ ու երբ օրկը սկըսաւ նուագել, յառաջացաւ անոնց հետ դէպի ծառը եւ կողովը: Տեսան որ իր գրպանէն պզտիկ թուղթ մը քաշեց եւ աճապարեց նետել կողովին մէջ, ծրարներու դէպին վրայ որ արագապէս կը բարձրանար: Ուրեմն ի՞նչ նուիրած էր Վանք թշուառներուն ու այն Յիսուսին որ կ'ըսէր, «Որովհետեւ այս Իմ եղբայրներուս ամենէն պըզտիկներէն մէկուն ըրիք, Ինծի ըրիք»:

Ոչ մէկը գիտցաւ թէ ի՞նչ էր տուած Վանք, եւ թէ ոչ շատ տարիներ վերջ, որովհետեւ ինք չէր ուզեր ըսել, եւ ոչ ալ ծրարը բացող եւ զրկողները գոհացում կուտային հետաքրքիրներուն: Այսպէս իր ծնողքէն զատ ոչ մէկը տեղեակ էր. եւ իր ծնողքը ինծի պատմեցին երբ ալ իրենց տղան իր գործին մէջ հաւատարիմ եւ պատուաւոր երիտասարդ մը եղած էր:

\* \*

Արդ, կ'ուզէ՞ք գիտնալ ինչ որ Վանք դրած էր կողովին մէջ իր կիրակնօրեայ դպրոցի երրորդ Ծնունդին առթիւ: Ահաւասիկ ինչ որ գոհացում պիտի տայ ձեր հետաքրքրութեան:

Պզտիկ պահարանի մը մէջ կար կտրուած քարդ մը, այնպիսի ձեւով մը, որուն մէջ կրնար դրուիլ նոր եւ փայլուն ֆրանք մը, յետոյ ծրարեց այս քարդը եւ դրամը թուղթի մը մէջ



որուն վրայ զրուած էր տառասխալներով լեցուն նամակ մը ուղղուած Յիսուսի:

Ահաւասիկ պարունակութիւնը:

Սիրելի Յիսուս,

Մեր կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհի օր-  
իորդս մեզի պատմեց այն պարտնին վրայ, որ  
ժանտալթղենին վրայ ելեր էր Քեզ տեսնելու  
համար. իր անունը չեմ յիշեր: Դուն ալ անոր ը-  
սիր, «Ի՛ջիր, քանզի այս գիշեր քու տունդ կ'ու-  
զեմ կենալ», եւ ինքը ըսաւ, «ես դրամ առի եւ  
չորս անգամը կ'ուզեմ վճարել»:

Ես ալ գողութիւն ըրի այն սուերէն որ մամաս  
կիրակի օրերը կուտար ձգելու այն սեւամորթին,  
որ շնորհակալ եմ ըսելու համար զլուխը կը շար-  
ժէր. հինգ անգամ հինգ սանթիմ առի սուսէդ զը-  
նելու. եթէ ինծի ներեա, Պրն. Երիքովցիին նման  
ետ տալ կ'ուզեմ դրամը: 4 անգամ 25 հաւասար  
է 100 սանթիմ կամ Ֆրանք մը (սակի Ֆրանքը  
հիմակուան հինգ Ֆրանքն է), ես այս դրամը աղ-  
քատներուն կուտամ: Մամայիս ըսէ, ես չեմ հա-  
մարձակիր ըսելու:

ՎԱՋԷ

Գիտէ՞ք, սիրելի պզտիկներ, որքան մեծ ու-  
րախութիւն ունեցաւ քարոզիչը, այս պզտիկ նա-  
մակը կարդալու համար եւ վերադարձուած դը-  
րամին համար: Հովիւը զայն շուտով աղքատ կը-  
նոջ մը տարաւ որ իր հիւանդ զաւակներէն մէ-  
կուն կը հսկէր, ու կրնար այդ Ֆրանքովը լաւ  
բան մը զնել:

Յետոյ վահէի ծնողացը այցելեց, որոնք երբ  
պատմութիւնը լսեցին, դառնալէն լացին, քան-  
զի տեղան որ վահէ գէշ ճամբու մը վրայ էր, իր  
խաբեբայ եւ զող մը: Բայց իրենց արցունքը  
ուրախութեան փոխուեցաւ, երբ խորհեցան որ  
վահէ հասկցած էր իր սխալ ճամբան եւ որո-  
շած էր իր ընթացքը փոխել եւ իր որոշման  
վրայ հաստատ կենալ:

Եթէ կար մէկը որ շատ ուրախացաւ, այն ալ  
իր կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհին էր: Անի-  
կա ուրախ էր իր խումբին մէջ ունենալով տը-  
ղայ մը որ կը նմանէր Զաքէոսի, Երիքովի մաք-  
սապետին, որուն պատմութիւնը իր աշակերտնե-  
րուն պատմեր էր:

Թարգ. ՊՉՏԻԿՆԵՐՈՒ

ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻՆ



## ԱՐԵՒԵԼՔԻ ՄՈԳԵՐԸ

Նըշանաւոր այն մեծ մոգեր  
Որ տեսան աստղ մը լուսաբեր,  
Շուտ արտորնօք ճամբայ ելան,  
Գուշակելով փառաց նշան:

Հետեւելով յիշեալ աստղին,  
Երկար ատեն ճամբորդեցին,  
Ուրախ գուարթ մինչեւ հասան,  
Վայրն աւետեաց Հրէաստան:

Լուր զրկեցին Հերովդէսին,  
Իմանալու Մանկան մասին  
Թէ ո՞ւր ծնաւ Արքայորդին,  
Որ արժան է համայն փառքին:

Հերովդէս յոյժ խռովելով  
Դըպիրները կանչեց իր քով.  
Հարցուց արդեօք ո՞ւր պիտի գայ  
Հրեայ ազգին փառաց Արքայ:

Իրը իմացան Մանկան մասին  
Շուտ Բէթլեհեմ արտօրացին,  
Գտան Մանուկն Աստուածորդին  
Փառաց Իշխան սուրբ երկնալին:

Ինկան իսկոյն եւ պաշտեցին  
Հզօր Աստուած Մանկան յանձին  
Որ արժան է փառաց համայն  
Դարերու մէջ եւ յաւիտեան:  
Նիւ Եօրք ՊԵՏՐՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ

ՊԱՏԱՆԵԱՅ

## ԿԵԱՆՔԻ ԾՈՎԸ

Կեանքին ծովն է խիստ ալիքոտ,  
Յիսուս, Դուն ես վեհ առաջնորդ,  
Թաքուն պահուած սուր խութերէն  
Հզօր ձեռքովդ ուղղէ վերէն

Մութ ամպերով պատած հոգիս,  
Ինչո՞ւ շրջարած կը շրջիս.  
Փորձութիւններ թող գան ուժգին,  
Սոսկ դուն գիմէ հզօր Փրկչին:



Նաւ մը ունիմ տատանեալ միշտ,  
 Զկայ երբեք փառքին մէջ վիշտ,  
 Կը հառաչեմ մարմինին մէջ,  
 Հոն կը փայլի լոյս մը անշէջ:

Յիսուս, նաւակիս մէջ եկուր,  
 Սիրոյ ծովէդ կաթիլ մը տուր,  
 Վրդովուած սիրտս խաղաղեցուր,  
 Սա ալեկոծ ծովէն անցուր:

Տէր, Դուն ես դիցազն նաւավար,  
 Թէեւ ճամբաս ըլլալ խաւար,  
 Խիզախ թեւերով պիտ թռչիմ,  
 Ու իմ Փրկչիս զիրկը հանգչիմ:

ԻՍԿԷՆՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ(1)

.....

(1) Իսկէնտէր Ղազարեան Ղազիրի կուրանոցի  
 աշագուրկներէն մէկն է: Ինք ծնունդով մահմե-  
 տական ընտանիքի մը զաւակ՝ Աւետարանի ճըշ\*  
 մարտութեանց հետ շփման գալով Յիսուսն իբր  
 իր անձնական Փրկիչն ընդունած է:

Վահրամ Սալիպեան

.....

### ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Ժ. ՏԱՐԻ 1934

#### ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

|                                    |                 |
|------------------------------------|-----------------|
| Անցաւորն ու յաւիտեանականը          | էջ 4            |
| Աստուած պարտուած, Աստուած յաղթական | 49              |
| Բանքերի ընտանիքին                  | 129             |
| Երկնից փառքը երկրի վրայ            | 113             |
| Ծնունդը տնտեսական տազնապի օրերուն  | 177             |
| Հնազանդութիւն                      | 17              |
| Հոգիով քալել                       | 131             |
| Միայն մտուր մը                     | 161             |
| Միսիոնարութիւնը                    | 33, 65, 97, 143 |
| Զորցած ոսկորներուն յարութիւնը      | 84              |

#### ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆԲ

|                            |               |
|----------------------------|---------------|
| Ահաւոր վայրկեանը           | 39            |
| Այս քանը Ինծմէ եղաւ        | 134           |
| Անիկա նոր ըրաւ             | 54            |
| Աստուծոյ Գերիշխանութիւնը   | 115           |
| Աստուծոյ սքանչելի գաղտնիքը | 36            |
| Առանձնութիւն               | 132           |
| Արիւնը                     | 136           |
| Բայց                       | 148, 165, 180 |

|                                    |               |
|------------------------------------|---------------|
| Եղբայրական փոխադարձ յարաբերութիւն  | 103           |
| Ես ու իմ տունս                     | 70            |
| Երգ անմահութեան                    | 55            |
| Երկնային կեանքը Յովհ. Աւետ.ին մէջ  | 163           |
| Եւ սակայն հոն                      | 63            |
| Ինծի ալ երեւցաւ                    | 99            |
| Ի յիշատակ                          | 104           |
| Իրաւցնէ Տէրը յարութիւն առաւ        | 53            |
| Խաչուած Բրիտանի հետ                | 70            |
| Ծպտեալ կոապաշտներ                  | 155           |
| Կայսրը եւ Ոսկերերան                | 21            |
| Հարկաւոր եւ բաղձալի միութիւնը      | 4             |
| Հնազանդութիւն                      | 37            |
| Հոգեկան ախտեր                      | 8, 21, 40, 86 |
| Հոգիս                              | 87            |
| Զգտումի փորձաքարը                  | 179           |
| Ճամբայ շինողներ                    | 3             |
| Մահուան անկողինին մէջ փրկուած      | 103           |
| Մեր ձայնը մահուանէ վերջ            | 69            |
| Մէկ բան միայն երգել կ'ուզեմ        | 183           |
| Մթութեան մէջ պարտէզ մը             | 20            |
| Միայն վայրկեան մը առաջ             | 118           |
| Մրցման համար մերկանալ              | 147           |
| Յաղթողները                         | 85            |
| Յիսուսը քարկոծել                   | 132           |
| Յիսուսի նայինք                     | 5, 23         |
| Նուիրումս                          | 167           |
| Շաքաթական անձնաքննութիւն           | 167, 180      |
| Որ Անոր մարմինն է                  | 84            |
| Որդեգրութեան Հոգին                 | 67            |
| Պղծութիւնը սրբարանէն դուրս հանեցէք | 135           |
| Սողմէն Սեգովը աղի արձաններ         | 6             |
| Սուրբեր ըլլալու կանչուածներուն     | 23            |
| Վկայութիւնս                        | 119           |
| Փրկչին նայէ                        | 22            |
| Քեփրոն                             | 51            |
| Քրիստոսի խօսքը                     | 35            |

#### ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ

|                                 |     |
|---------------------------------|-----|
| Ամէնը, ի բաց առեալ Յովհաննէս    | 121 |
| Անոր սէրը                       | 151 |
| Աստուծոյ դատաստանը              | 9   |
| Աստուծոյ խօսքը կենդանի է        | 14  |
| Դուրս պիտի չհանեմ               | 183 |
| Երեք կորուստներ                 | 122 |
| Թօլէր եւ մուրացկանը             | 88  |
| Իմ վկաներս դուք էք կ'ըսէ Տէրը   | 9   |
| Ինիսուն եւ ինը                  | 72  |
| Իր բերնին գաւազանովը պիտի դարնէ | 42  |
| Լսողներ միայն                   | 104 |



## Խմբագրութիւնս

Ծննդեան եւ Նոր տարուան տօնական օրե-  
րուն առթիւ Աստուածային շնորհաց առատ օրհ-  
նութիւնները կը մտղմէ «Բանբեր»ի ընտանիքին:

|                                       |       |
|---------------------------------------|-------|
| Խաղաղութիւն խաչին արիւնովը            | Էջ 24 |
| Խօսքը կապարողներ եղէք                 | 41    |
| Կրակէ փորձը                           | 168   |
| Հաւատքը որ սիրով ի դորձ կը գրուի      | 24    |
| Մարգարէտնի կրակը                      | 136   |
| Ձեռն աղաչեք որ զանոնք աշխարհէ վերցնես | 41    |
| Պիտի ըլլայ լալ ու աղաներ կրճտել       | 24    |
| Սատանայի թափթփուքները                 | 42    |
| Սորվեցուր ինծի որ Քու կամբք ընեմ      | 49    |
| Ս. Գիրքը նպարավաճառի փաթթելու թուղթ   | 105   |
| Տեսակցութիւն մը Քարլ Պարթի հետ        | 56    |
| Փառք տալու պատճառ մը                  | 9     |
| Փրկութեան խօսքեր                      | 184   |

## Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԻԹԻՒՆ

|                      |                    |
|----------------------|--------------------|
| Երգ երգոց            | 106                |
| Խաչին գալթակղութիւնը | 152                |
| Հրեշտակները          | 25, 43, 59, 73, 89 |
| Յուզա Իսկարիովտացի   | 41                 |

## ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

|                                      |               |
|--------------------------------------|---------------|
| Ան որ գալու է                        | 10            |
| Աստուծոյ խօսքին զանազան ունկնդիրները | 42            |
| Թուլցած ձեռքեր ու տկար ծունկեր       | 58            |
| Կիրականօրեայ դասերու ներշնչումներ    | 154, 169, 185 |
| Մեղաւորին տեղ                        | 25            |
| Յայտ. Ա. գլխուն մէջ յիշուած են       | 122           |
| Քրիստոսի անձը                        | 137           |

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

|                     |                     |
|---------------------|---------------------|
| Ատուլֆ Մօնօ         | 28, 45, 75, 93, 123 |
| Հայասէր գերմանուհին | 139                 |
| Ճան Ուէսլի          | 156, 170, 186       |

## ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

|                                      |     |
|--------------------------------------|-----|
| Աստուծոյ պարգեւը                     | 172 |
| Արեւելքի մոգերը                      | 190 |
| Բան մը չէ, ասէն քան եղած է           | 61  |
| Երկնային զգեստը                      | 95  |
| Երկու տղաքներ                        | 62  |
| Ինծի պէտք եղածը                      | 126 |
| Հաւագոյն Ծնունդը                     | 14  |
| Խաչին զինուորը                       | 62  |
| Կեանքի տեղ կեանք                     | 42  |
| Կողմնացոյցը                          | 157 |
| Կոյր երգիչ մը որ 8000 երգեր գրեց     | 30  |
| Հովիտին ամենէն հարուստ մարդը         | 127 |
| Մաքուր ձեռքեր                        | 77  |
| Յիսուսը տեսնել                       | 95  |
| Յիսուս ո՞ւր կը բնակի                 | 78  |
| Յիսուսի քով ամէնն ալ մեծ արժէք ունին | 34  |
| Ո՞վ աւելի շատ կը սիրէ                | 173 |
| Ուղիղ հետքեր                         | 111 |
| Ջուր եւ կրակ                         | 112 |
| Սեւամորթին քարեպաշտութիւնը           | 79  |
| Վահէի նուէրը                         | 189 |
| Քրիստոսի սիրոյն համար                | 141 |

## ՋԱՏԱԳՈՎԱԿԱՆ

|                                  |     |
|----------------------------------|-----|
| Քանի մը գիտական իրողութիւններ... | 94  |
| Օքսֆորտի խմբական շարժումը        | 106 |

## ՊԱՏԱՆԵԱՑ

|                              |             |
|------------------------------|-------------|
| Եթէ սէր չունիս               | 110         |
| Էմմանուէլ                    | 125         |
| Ժանգը                        | 48          |
| Հարցումներ Սուրբ Գիրքէն      | 15, 32, 142 |
| Սուրբ Գիրքէն մարգանք         | 48          |
| Վկայութիւններ կիր. զպրօցէ մը | 143         |

## ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

|                                                |
|------------------------------------------------|
| 15, 32, 63, 79, 96,<br>112, 128, 143, 158, 174 |
|------------------------------------------------|

Rédaction du « PANPÈRE »

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St. - Savournin Marseille



## ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՉ

(Շաբաթաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

**Ս ԱՐՍԷՅԷ**—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան  
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,  
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,  
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,  
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց  
մանկանց 17 Rue de l'Eclipse

Շաբաթաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,  
Սէն ժիւլիէնի, Սէն Սեբաստիանի, Սէն Մարկրի-  
թի, Սէն Ժերմի Պուվար Օտօի մէջ):

**Սէն Լուի**.—Քարոզիչ Պրն. Վաֆան Սահակեան,  
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:  
9. 30ին Ս. գրական ուսումնա.  
16 ին քարոզածողով:

**Սէն Մարկրիթ**.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

**ԼԱ ՍԻՅԱՆ**.—Քարոզիչ Պրն. Ս. Պագգալեան,  
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով  
Ֆրանս. եկեղեցիին մէջ  
15 ին քարոզածողով,  
Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

**ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ**—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան  
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս  
10. 15 քարոզածողով  
18. 30 աղօթածողով

**Սէն Փիլիպ**.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:  
16. 30 ին քարոզածողով եւ  
աղօթածողով

**ՄՕՆ ԹԷԼԻՄԱՐ**.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:  
14ին քարոզ եւ աղօթածողով

**ՎԱԼԱՆՍ**.—Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան  
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence  
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս  
եկեղեցիին մէջ

**ՌՕՄԱՆ**.—

Կիր. քարոզածողով:

**ԼԻՕՆ**—Հովիւ' Պատ. Դ. Պարսումեան,  
18, Rue du Dr. Rebatel:

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,  
5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:  
15 ին երիտասարդութիւններու  
ժողով (15 օրը անգամ մը):  
18 Rue du Dr. Rebatel.

**ՏԷՍԻՆ**.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,  
15ին աղօթածողով: Rue Wilson.

**ՍԷՆ ՄՕՐԻՍ**

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

**ՎԻԷՆ**.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով  
Rue Lafayette.

**ՓՕՆ ՏԷ ՇԷՐԻԻ**.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով  
(15 օրը անգամ մը):

**ՍԷՆԹ ԷԹԻԷՆ**—Քարոզիչ Պրն. Ի. Արքամեան  
2. Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով  
57 Rue de la République.  
17ին աղօթածողով  
Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

**ՍԷՆ ՇԱՄՕՆ**.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով  
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

**ԲԱՐԻՉ**—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,  
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով  
135 Bd. de Sebastopol Paris 2<sup>e</sup>  
Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին  
37 Rue Tournafort Paris 5<sup>e</sup>  
Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-  
Քրիստոնէական Միութիւն

բանաստուծիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-  
դութեան Քրիստոնէական Միութիւն

բանաստուծիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սբ. Գրոց  
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր, ժամը 20. 30ին աղօթածողով  
59 Ave. du Bas Meudon Ile St Germain  
Issy les Moulinaux.

**ԱԼՖՐԷՎԻԼ**.—Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,  
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք  
Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս



## ԲԱՑՈՒԱԾ Է

1935 ՏԱՐՈՒԱՆ «ԲԱՆԲԵՐ» ԱՄՍԱԹԵՐԹԻՆ

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

### Ֆրանսայի համար

|                   |        |
|-------------------|--------|
| Հայերէն լեզուով   | 20 ֆր. |
| Թուրք էերնլեզուով | 10 ֆր. |
| Երկուքը միասին    | 25 ֆր. |

### Սուրիա

|                   |        |
|-------------------|--------|
| Հայերէն լեզուով   | 15 ֆր. |
| Թուրքերէն լեզուով | 7 ֆր.  |
| Երկուքը միասին    | 20 ֆր. |

### Ասերիկա

|                   |              |
|-------------------|--------------|
| Հայերէն լեզուով   | 1 տոլ. 25 ս. |
| Թուրքերէն լեզուով | 60 ս.        |
| Երկուքը միասին    | 1 տոլ. 75 ս. |

### Պալքանեան եւ ուրիշ երկիրներ

|                   |        |
|-------------------|--------|
| Հայերէն լեզուով   | 20 ֆր. |
| Թուրքերէն լեզուով | 10 ֆր. |
| Երկուքը միասին    | 25 ֆր. |

## ՍՏԱՑԱՆՔ

«Շնորհաց ցօղեր» տարեգրքոյկը, Բ. տարի 1935

Մարտէյի եկեղեցւոյ եղբայրներէն լեւոն Սիմոնեան, որ շատերու ծանօթ է իր «ցօղ» ամսաներթով, երկու տարիէ ի վեր տարեկան հանդէսով մը հրապարակ կուգայ «Շնորհաց ցօղեր» անունով: Հոգեւոր տարեգրքոյկ մը մեր շրջանակներուն մէջ աննախընթաց գործ մըն է եւ ուստի քաջալերանքի արժանի: Այս տարուան հատորը գրպանի տարողութեամբ 96 էջերէ կը բաղկանայ, եւ գեղատաշակ տարագ մը ու օգտակար բն. վանդակութիւն ունի: Գին 2 ֆրանք: Դիմել սեպի կամ ուղղակի՝

Levon A. Simonian  
28 Rue des Petites Maries  
Marseille France

Rédaction du "PANPÈRE"  
7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & Cie  
39, Rue St.-Savournin - MARSEILLE















